որոյ բռնադատի մարդ կալ
և միայ յաւիտեան ը այնպի-
սի աչարկու թշնամեաց, և
դժնդակ դահճաց, որք ո՛չ
ունին դդուլ և դադար, և
զողորմ: Զինի երբեմն, զի
գթացեալ եկեղեցին՝ թոյլ
տայ առն և կնոջ բաժանիլ 'ի
միմեանց բնակութե, յոր
ժամ ոխալից՝ անհաշտ թշնա-
մութե հարեալք, չարանան-
առ միմեանս, լաւ համարեալ
նոցա առանձին կրել զտմ վիշտ՝
քան յընկերութե թշնամւոյ
ունիլ զգիւղութի: Արդ՝ եթէ

Թշնա-

թշնամոյն սատանի եւ կնոջ ոգե֊
խառնելոյ , է այնպէս ան֊
հանդուրժելի · ապա զինչ լի֊
ցի թշնամութիւն դիւաց ընդ֊
տառապեալ մեղաւորաց ։ Ե֊
րանի էր նմ՝ եթէ գտեալ
գութ ՚ի տ̄նէ , հնարէին մեկ֊
նիլ ՚ի դիւաց , եւ ը̄ [?] մի խոր֊
աշխարհի մնացեալ , կրէին
զպատրաստական տանջանս
դժոխոց՝ որպէս կրակարան
ինչ կայծականց սեպհական֊
եալ նմ ։ Այլ այժմ ոչ գոյ ակն
կալութն ։ Ուստի ասէ ՚ի սաղ֊
մոսի · III · 10 · Մեղաւորն տեսցէ՝
եւ բարկասցի , զատամունս իւր կր֊
տեսցէ՝ եւ հալեսցի , եւ ցանկութիւն մե֊
ղաւորաց կորիցէ · [?] , մեղաւորին
զսոսկալի տագեղութն [?] տանջո֊
ղացն իւրոյ տեսցէ , եւ բար֊
կասցի ։ Ուիցէ [?] զնախատինս
եւ ՚ի սատանիկ [?] կատաղութե֊
իւր֊

իւրմէ զատամունս իւր կրճըտեսցէ, և ոչինչ օգտեալ անձին իւրում այսուիկ՝ հալեսցի՞ զի ցանկութի մեղաւորաց ընդունայն ՚ի դերև ելեալ կորիցէ ։

Թէ ո՛րչափ դառնապէս տանջին դատապարտեալքն յընկերակցութէ մեղաւորաց ։

Մտածեա երրորդ, զի անպատմելի իմն օրինակաւ դառնագոյն պատուհաս լինի մեղաւորաց ընկերանալն իւրեանց ընդ նս, որք յաշխարհի աստ մեղակից եղեն նց, քան զընկերանալն ընդ դիւաց ։ Որովհետև արդար դատաստանաւն այ արժան իսկ է՝ զի նա որ սպասաւորեաց մեղաւորին ՚ի մեղալից հեշտութի, որով

որով դառնայոյց զքաղցր բարերարն ա̄ծ , եղիցի նմա վիշտ անտանելի 'ի դժոխս ։ Ուստի խրախակիցք լկտի պարուց խնջոյից , սեղեխք և հաւանէք և ընկերքն 'ի յայլ մեղս , եղիցին 'ի խաւարագոյն տանջանս 'ի դժոխս ։ Նաև կատարի սուգիւ այն , որ սպառնացեալ էղև 'ի ձեռն յեսուայ, թէ նմա որ 'ի սրտէ յարի 'ի ստեղծուածս ընդդէմ ա̄ծային սիրոյն , նոյն իսկ ստեղծուածն հանդերձեալ է լինիլ նետ 'ի յաչս նր ։ Որ ասէ · լինիցին նետք 'ի յաչս ձեր · յեսու · 23 · 13 ։ Քանզի տանջեն զնա զարշելի դաժանատեսիլ զարհուրելի երևմամբ խուրեանց , և յիշատակաւ գործեալ մեղացն ։ Նաև ո՞վ բաւական լիցի նկարագրել 'ի մտի զանհնարին անէծս,

նէծս,

նեծս . զչարախօսութիւնս , և զհայհոյութիւնս , զորս 'ի վ[ե]րա մի մեանց իբրև զկայծակունս հրոյ թափեն սրտմտեալ ցասմամբք , որք և զմիմեանս ցանկան լափել , և անկարգացեալ ոյամ , զ. առնան անձամբք անձին իբրև կատաղի շունք զանձինս իւրեանց խածատել · ո՜վ տալի եսայ · 9· 20. Խոտորեսցի յաջակողմն իւր առ քաղցի՝ կերիցէ ի ձախակողմն իւր, և ոչ յագեսցի մարդ ուտելով զմարմինս եղբօր իւրոյ , զի կերիցէ Մանասէ զԵփրեմ , և Եփրեմ զՄանասէ , և 'ի միասին պաշարեսցեն զՅուդա : Քաւ քեզ՝ ո՛վ սիրեցեալդ 'ի ք[րիստո]ս , մի՛ լիցի 'ի տարաարուանս այն անկանիլ · ամ̄ խնդրեմ 'ի տ[եառ]նէ վ[ասն] քո՝ և վ[ասն] իմ · Վա՜յ քեզ , եթէ 'ի ժամէ աստի և անդր , սկսցիս արկանել զաչսդ 'ի գեղ երեսաց ,

և տացես զսիրտ քո 'ի օրհնել
զնա, որ արգելեալն է քեզ յա̄ծ-
ային պատուիրանաց, զի 'ի
գործս ո՛չ այնչափ տանջեսցիս
յումեքէ 'ի դի՛ւաց՝ ո՛րչափ 'ի
նմանէ, զոր յասոտի կեանս ը̄-
դէմ ա̄ծային պատուիրա-
նացն սիրեցեր, և փափկութ̄ե-
նն հեշտացար : Այն դէմքն,
զոր յասոտի կեանս կոչես զու-
արձութ̄ի քո, եղիցի քեզ 'ի
գործս ա՛յնչափ դժնեայ դա-
ժանատեսիլ, մինչև ո՛չ դի՛ւին
դժնէութ̄ի նմա հաւասարիլ
մարթասցի : Աչքն, զորս յի-
մարութ̄ե ատեղաց նմանե-
ցուցանես, յայնժամ սայրա-
սուր սլաքս, նետս և տէգս ը̄-
դէմ քեզ արձակեսցեն : Ձեռքն
որք այժմ ոսկեթելք երև-
ին, յիժս և յօձս փոխեալ քան
զա̄մ վիշապս դաժանագոյնս ե-

ընկեսցին քեզ 'ի դժոխս ։ Եւ միանգամայն ասեմ՝ յընկերակցութէ անտի մեղսակից եղելոց՝ զեղցի 'ի վերայ քոյ անտանելի ցաւոց յորդութի խիստ քան զդժոխս, 'ի մտածելն քում զյետին անմտութիւնդ, որով յաղագս այնպիսի սնոտի գեղոյ աղբեղէն մարմնոյ կորուսեր զանբաւ՝ զանձառ՝ զանպատմելի գեղեցիկ երեսացն նոյ զտեսութիւն, և մի՝ դոյզն անցաւոր բարւոյ ներքոյ անկար անզրաւելի տանջանաց՝ և թշուառութե ։ Իշխան ոմն մեծ՝ ձեռբակալ եղև 'ի պատերազմին։ Եւ իբրև դէպ եղև նմա տեսանել զզօրական ոմն զիւր՝ յաղթօղ 'ի պատերազմի, և նմա չարակամ և ատելի յոյժ, ցաւագին սրտիւ աղաղակեաց առ մերձաւորսն, հայա,

կամ

կամ զսա բարձէք յառաջոյ
իմմէ, և կամ դթացեալ յիմ
սպանէք զիս : Որդ՛ եթէ սա
կի փոքր մի կենցաղական ա-
տելութե՛ այսպէս յօժարու-
կամ ցանկայ մեռանիլ, քան
տեսանել զատելին իւր, ապա
զի՞նչ լինիցի ՚ի դժոխս՝ ՚ի տե-
սանելն զդժոխայինն ատելին
օ՞ն արի, ասա՛ ինձ, զո՞ր մահ
ոչ առնուցուս յանձն, յո՞ր մի
բաս ո՛չ ընտրեսցես ընկղմիլ,
ո՞ր դիւրութ՛ն ոչ լինէր քեզ՝
ընկերակցիլն օձից և վիշա-
պաց. ո՞ր սփոփանս ոչ մատու-
ցանէր քեզ նաև կենցաղակ-
ցութ՛ին դժնեայ, եթէ հնար
էր քեզ բառնալ յառաջոյ քում
մէ զմեղակիցն քո, զայն ա-
սեմ, զոր դու յառաջագոյն
բարբառելովն առաւել հեթա
նոսաբար, քան բանաստեղ-

ծօրէն , կոչէիր անձուհի քո : Բայց սակայն չէ՛ք ուստեք քեզ հնար 'ի պատուհասէ սաստի եւ 'ի տանջանաց ազատ լինել : Կարես արդարեւ զայրագինս անիծանել՝ եւ նզովել զատեսութիւն զայն զմեղսակցին , այլ ոչ ունիս 'ի քէն 'ի բաց մերժել եւ հեռի առնել : Նու արդ մտախո՛հ լեր եղբայր , եւ տես թէ ո՞րչափ դժնդակ կիրս բերէ մեղաւորին պատիժս այս՝ եւ պատուհաս : 'Ի վաղնջական ժամանակս օրէնս ունէին հինքն՝ զմարդասպանն այսպիսի իմն օրինակաւ պատուհասել : Դնէին զնա 'ի պարկ մի , եւ ընդ նմա 'ի նոյն պարկ արկանէին զաքաղաղ մի , զկապիկ մի , եւ զօձ մի , եւ փակէին զբերան պարկին՝ ծովամոյզ առնէին՝ յահ եւ յերկիւղ տե-

սո-

սողալ և լողալ, ոմ̃ զի մի ոք
յանդգնեսցի ձեռնարկեց լինել
՚ի սպանութ̃ին մարդոյ ։ Ա՛յլ
սոսկալի արդար պատուհա-
սիս ։ Բայց այս ոչինչ է համե-
մատեալ առ այն սոսկալի
մեղսակցաց ընկերակցութ̃ին ՚ի
գործս, զոր եդին ամենային
արդար դատաստանն, խստա-
գոյնս պատուհասել նոյնա
զմեղսաւորս, զի փակէ զմե-
ղաւորն ՚ի բանտի միում ըն-
դ դատապարտեալ մարդովք, և
դահիճ դիւօք, որք նախան-
ձու և ատելութ̃բ վառեալ
գոոհ տան ՚ի մի՛, խաղան և
յարձակին ՚ի հրեղէն ծովուն
յայնմիկ, զորոյ ոչ եզր, և ոչ
զյատակն է նշմարել ։ Այս-
ղարմանք մեծ են, զի տակա-
ւին դոն բաղցումք, որք զայս
բանտս ընտրեն խուրեանց ՚ի

մշտնջենական բնակութի :
Եւ առ սորա ընտրութի խոս_
տեն զգեղեցիկ եդեմն երկնայ
ին : Զայս ցուցանէ տէր յա_
սելն . մատ. 7. 13. Ընդարձակ է
դուռն և հանդարձակ ճանապարհն,
որ տանի 'ի կորուստ, և բազումք են,
որք մտանեն ընդ նա : Ինչ որ ա_
սէ՝ բազումք են՝ որք գնան՝ ոչ
բռնութի ինչ իբր ընդ բարշ
այլ կամակար մտօք, և յօժա_
րաքայլ գնացիւք :

Աղօթք առ հոգին սբ պահելոյ 'ի
պարապորդութէ :

Ամենակալ ած սբ հոգի, ան
ճառ զօրութի, ահեղ մեծու_
թի, ընդ հօր և ընդ որդւոյ
մի ած, հաստիչ և խնամօղ
ամե

ամբարհաւաճիկ եւ հողմնկութ
գործ ձեռաց քոց անկեալ ա-
ռաջի երկրպագանեմ քեզ 'ի
խորոց ոչնչութե իմոյ, և խոս
տովան լինիմ ճշմարտութե,
թէ առանց քոյին օգնականու
թե ոչ երբեք զգործ ինչ փր-
կութե անձին իմոյ առնել կա
րեմ։ այլ և ոչ խոկ զբարի ինչ
խորհուրդ կեցութե 'ի միտս
իմ յառաջ բերել, որովհետև
զլիովին տկարութի եմ։ Սու
զիարդ հնարեցայց ես 'ի խորան
գէ անտի դատապարտութե,
որ առ ամպարտանց համեմատ-
եալ՝ մեծ է և առաւել կա-
կածաւոր, զանձն իմ՝ ձողո-
պրել, գործոյ հաճոյից քոց
հանապազորդութե ։ Ո՛ւր է
տալ ինձ զօրութի, և հաստա-
տել տկարութե իմոյ 'ի թի-
կունս. և փառք քո է յաղթա

նակել ինձ 'ի մէջ թշնամեաց
քոց՝ և անձին իմոյ, փրկելով
զիս յամէ, որ փրկութե̃ իմոյ
'ի դիմի հարկանէ : Դու ես
ամենակալ մխիթարիչ ու̃ր հո-
գին, դու ես ինքնաբուն բա-
րի, հոգի ուղիղ առաջնորդա-
կան, որ ը̃ էակցին քում փրկ-
չին մերոյ խոստմամբ՝ ընտրե-
լոյն ա̃ծութեդ քո առաջնոր-
դես ա̃մ ճշմարտու̃թ յերկիրն
ուղիղ, յերկիրն իսկու̃թ կեն-
դանեաց: Ընկա́լ և զիս ը̃ ամե-
նայզօր թևոց քոց հովանաւորու̃թ,
և մի՛ թողուլ տայցես ինձ 'ի խաւս
իմ գնալ, և անկանիլ 'ի դա-
տապարտութի . և 'ի թշնամա-
նութին յաւիտենական, լու-
սաւորեա՛, ուղղեա՛, ամրացո՛
յամ̃ վտանգէ յանցանաց, և
առաջնորդեա՛ յերկիրն ուղիղ
և բարի, որ է արքայութի քո

Երկնա

երկնայինն ։ Քանզի 'ի քեզ
տ̃ր յուսացայ , մի՛ ամաչեցից
յաւիտեան , յարդարութե
քում փրկեա՛, և ապրեցո՛ զիս ։
Եւ ոչ միայն վն̃ անձին իմոյ ,
այլ և վն̃ ա̃մ քրիստոնէից հե-
ղում առաջի քո զայս մաղ-
թանս , յանձն առնեմ զնո̃
մարդասիրութե քում՝ մեծի ,
և աղաչեմ փակել ընդդէմ նց̃
զճանապարհն անդնդոց դժո-
խոց՝ քոյին շնորհիւ , դարձու-
ցանելով զնո̃ 'ի մեղաց , և խո-
փանելով 'ի չարեացն , որով
միշտ ընդարձակեն անձանց
իւրեանց զայն ա̃մ թշուառու-
թեց տարապարտուն ։ Լուսաւո-
րեալ պայծառացո՛ զմիտս նց̃ ,
որք 'ի մեղս են , ճանաչել՝ թէ
ընդ ո՞ր դիմեալ են երթալ հա-
սանել գնացք վարուց նց̃ , և
ամոքեա՛ զնո̃ 'ի բաց դառնալ
'ի

՚ի կորստական շաւղէն, և ուղ_
ղել զգնացս խորհեանց ըստ լու_
սաւոր պատուիրանաց քոց ՚ի
փրկութիւն յաւիտենից : Ոզ_
գի մեր ամենեցուն յարքայու_
թեան երկնից ժառանգել, փա_
ռաւորեսցուք զքեզ ընդ հօր
և ընդ որդւոյն միածնի ՚ի յա_
ւիտեանս յաւիտենից : ամէն :



# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ

## Չորրորդ,

Վասն չորեքշաբաթի աւուր :

Յաղագս զրկման ՚ի տեսու-
թենէ երեսայն այ · որ ան-
ուանի պատիժ վնասու :

Թէ այս զրկումն է խիստ տանջանք,
Եւ անհնարին չարչարանք :

Ո՞չ զի կարասցես՚ի միտ առնուլ զիմացուածս մտածութեան այսր աւուր, գիտել պարտիս նախ, զի կրկնակի է պատիժն դատապարտելոց : Որոց մինն

անուանի պատիժ զգայուն, և միւսն՝ պատիժ մտաւոր. Պատիժ զգայութեն է տանջանքն զոր կրէ դատապարտեալն՝ ի դժոխս յանշէջ հրոյն, յանքուն որդանցն, և ՚ի գաղանացն՝ որք են դևք. այլև վիշտն զոր կրէ ՚ի դատապարտակից ընկերացն: Իսկ պատիժն մտաւոր է զրկիլն ՚ի տեսութեն երեսացն այ ՚ի յաւիտեան: Որդ՝ առաջինկայ մեծածութիս է՛ խիստ պատժոյս այսորիկ մեծի: Ուստի մտածեա՛ նախս, թէ որչափ մեծ է պատիժս այս: Բայց ով կարէ բացատրութեամբ ցուցանել, թէ որպիսի ինչ է զրկիլն յերեսաց ծայրագոյն բարւոյն: Ոի ով ոչ ոք կարէ պատմել, թէ որպիսի գեղեցիկ, և որչափ բարի է ած, և որքան ցանկալի է հոգւոյ մերում երբ ՚ի ծանրութէ մարմնոյ ազատ լինի, այն

պէս

պէս ոչ՛ք կարէ ձայնել զտան-
քանան, զոր դ՛րպարանեալն կրէ
՚ի զրկիլն խրոսմյերանելի տե-
սութե՛ն երեսաց ա՛ծութե՛ն ։
Ասաի ասէ ս՛րբն օգոստինոս
յաղագս հանդերձեալ երա-
նութե՛, թէ կարէ ստայեալ
լինիլ, այլ ո՛չ կարէ պատմիլ ։
Նոյնպէս և հակառակն այսմ,
պատիժն մնասու կարէ կրիլ,
բայց ո՛չ կարէ պատմիլ, ո՛չ մի-
այն ՚ի մէնջ, այլ և ո՛չ ՚ի դա-
տապարտելոց անտի, և ո՛չ իսկ
յերանելեացն երկնայնոց ։
Այն սա արդարև է դժոխք
դժոխոց, և ՚ի սմին կայանայ
դատապարտութ՛ին էաբար ։
Այս ասէ ս՛րբն թովմաս յէնգ-
գիրս պիտառնութեյ. գ. լ. 174.
թէ յետէն դատապարտութ՛ին չայս
նայ ՚ի բոլորովին պէսն մարդ մարդոյ
յոծայէն լուսոյն, և ՚ի բայ լինիլ ու-

րոյ նր յածայէն էութենէն՝ անդար_
ձօրէն : Եւ մնկ տանջանքս այս
է անհնուն . Ստուգ թէպէտ և
բիւրապատիկ աճաւելեր բո
ցանկիզութի գեհենոյն , զոր
զմտապատրաստեալքն կրեն , ո՛չ հա_
ւասարէր այս տանջանացս, որ
է զրկել ՚ի լուսոյ փառաց՝ և
յանսպատմելի գեղեցիկ տե_
սութէն ա͞յ , որպէս ցուցանէ
զայս ոբ յոհան ոսկեբերանն .
՚ի 24. երր. ճառն ՚ի վր եօթնե_
րորդ գլխոյ աւետարանին
Մատթէոսի : զի ասէ : Եթէ ոք
հազարապատիկ տասնեկունցու գեհե_
հեանն ո՛չ ցուցանէ այնպիսի ինչ, որ_
պիսի է զրկելն ՚ի պատուոյ երանելի
տեսութեան ա͞յ . որպէս ասէն ընդդէմ .
Եթէ բիւրապատիկ տասնեկունցուն
թերելութիւն արքայութե, այնչ
հասարակ խնդութեն , որ [illegible]
՚ի մէջ ՚ի դէմ յանդիման տեսութեն ա͞յ:

Բայց զի որպէս յաստի կեանս ,
զոմն ոչ կարեմք իմանալ այն֊
պէս , որպէս էնն , զի անբաւա֊
պէս ՚ի վեր է քան զամենայն միտս ,
և զխորհուրդս ։ Այնպէս և ս
զկորուստ սքանչելի տեսութե֊
նն ոչ կարեմք ՚ի միտ առնուլ ։
զի է չար ինչ՝ անչափապէս դժ֊
բաղանցեալ քան զամենայն միտս ։
է չար ինչ՝ յոյժ արարչէն յա֊
ռաջադրեալ ։ է չար ինչ՝ որպ
կարգ է ասել , ելեալ և բղխեալ
՚ի հրամանացն այ , որ ասէր մե֊
ծին թեռնարտոսի , ոչ ած է ա֊
սէ , և միանգամայն տանջանք չարա֊
գործաց ։ ՚ի հինգերորդ մատենին
յաղագս խոկմ ։ դլ ։ 12 ։ Իբր
թէ ասէ ։ որպէս նոյն ինքն է ծայ
րագոյն երանութիւն ընտրելոց
՚ի յերկինս ։ նոյնպէս եղիցի
ծայրագոյն տանջանք դատա֊
պարտելոց ՚ի դժոխս ։ Բայ

՚ի զրկմանս յայտնիկ լինել սու_կալի բաժանումն իմն, և հաստատել յաւիտենական թշնամութի ՚ի մէջ ստեղծողին և ստեղծուածոյն՝ յասելն իւրում առ մեղաւորս, թէ գնացէք ծողովողաբք էմ · ու էս ո՛չ ճանաչեմ զձեզ ։ ո՛ճ ասի ուխիայ · I · 9 ։

Որ մեղաւորն այնուհետև ո՛չ ևս յաւելցէ լինել ստեղծո_ղի իւրում ըստ ընդունելոյ ըզ_մխիթարութի ինչ ՚ի նմանէ, և ստեղծօղն ո՛չ ևս յաւելցէ լինել մեղաւորին ըստ առնելոյ նմա զհովանաւորութի ինչ և զհանգիստ անձին։ Նա յայտնագոյնս ասեմ, ա̃ծ այնուհետև ո՛չ եղիցի ա̃ծ նմ̃ · զի ո՛չ ևս յաւելցէ ողորմել նմ̃ · և նո_քա ո՛չ ևս յաւելցեն լինել ժո_ղովուրդք նմա, զի ո՛չ ևս յու_սան ընդունել զողորմութի նր̃ ։

նի : Նոյն միշտ և համապազ
ատեսցէ, հերքեսցէ՝ և մեր_
ժեսցէ զնոսա 'ի բարեացն իւ_
րոց հաղորդութենէ : Նաև միան_
գամայն մերձ լիցի առ'ի ըլկել.
և տանջել : Սորին վասն և դա
տապարտեալքն այնուհետև
ատեն զած , և հայհոյեն ա_
ռանց ինչ կարօղ լինելոյ հեռի
առնել զնա յինքեանց : Ո՞վ
գառն որոշմանս : ո՜վ սոսկա_
լի ահաւոր մերձակցութեան,
յորոյ երկոքինն իսկ անսպառ
մելի մեծամեծ տանջանք են
դատապարտելոց : Սաստի ահ
մեծէ անկանելն յերեսացն այ
'ի յաւիտեան : Բայց սակայն
մեղաւորքն մինչ դեռ յաստի
կեանս են, ինչ ոչ համարին
զայս՝ և ոչ զարհուրին : Իշխա
նութիւն դատաւորաց կոչի յօ
րինաց՝ ահաւոր, ով և կրե_

սողիս գրէ 'ի Ճաշոյն . Պատ-
ուրութէ ահեղանձնորդութեան իշխանութէ .
Եւ պատասխանի է, զի կարող են
պատժել զյանցաւորս ութնա-
գգեան : իսկ զի՞նչ լիցի տրու-
թին որոյ . ո՞չ լիցէ ահեղ և սար-
սափելի , որ ոչ եթէ ութնա-
գգեան , կամ բիւրազգեան
պատժոցք պատուհասէ . այլ
անթիւ անհամար ազգս տան-
ջանաց սահմանել 'ի մի՛ մեղա-
պարտաց , ինքնին իսկ լինի
տանջանք նց . վոյ մարգարէն
գոչացեալ ասէ . Ո՛չ երկիցէ 'ի
քէն Թագաւոր ազգաց , Երեմ . 10 . 7 .

### Թէ ընդէ՞ր չերեւայն մեզ՝ է հոգեւոր տանջանէն հանճարոյն :

Մտածեա՛ երկրորդ, զի մեղաւորքն յաստի կեանս դոյն ինչ համարին զծայրագոյն բարին կորուսանելն, որ է զրկիլ ՚ի տեսութենէ երեսացն Այ՟ ՚ի յաւիտեան. Եւ պատճառն այսմ է. զի սովորութիւն լինելով նց՟ զա՟մ ինչ չափել զզգայութե՟, ոչ կարեն իմանալ զչարն, որ գերագոյն է քան զզգայութիւն. ոչ է յաստի կեանս պատիժն զրկման դատապարտելոց : Եւ դարձեալ. քանզի յաստի կեանս մոլեգին ախորժանաց նց՟ հաճոյական իմն թուի հեռի կալն յԱյ՟, կարծեն

թէ միշտ և յաւէտ հեռի լի-
նիլն ես հեշտ և դիւրին իցէ,
և այսր աղագաւ ո՛չ իմանամ,
թէ ո՛րչափ դատն և ո՛րչափ
խիստ տանջանք իցէ իսպառ
մերժիլն յերեսացն Այ, որ լի-
նի մեղաւորին յետ աստի կե-
նացն։ Ա՛յլ ո՛չ ին յայսմ դատաս-
տանի, ո՛չ և յայլս, բոլորովին
յիմարին, զի մեք յաստի կեանս
ոչ ընդունիմք զպայծառ ծա-
նօթութին հանդերձեալ երա-
նութեան, որ է վայելել յերա-
նելի տեսութին երեսացն Այ ։
այլ ունիմք միայն զտեղեկութ
ինչ յոյժ նուաղ, և մթին ։
Իսկ ՚ի հանդերձեալն դատապար
տեալքն ունիցին զսուր իմա
ցումն այնպիսի մեծահրաշ
բարւոյն, և ստուգիւ գի-
տասցեն, թէ հասանելոց էին
այնմ՝ անճառ անպատում

վայ-

վայելմանն • բայց վն յանցա-
նաց իւրեանց խոտան գտեալ՝
վրիպեցան: Եւ յիմանալն իւ-
րեանց զայս, զոր և սուր մտօք
ըմբռնեն, հաճին ՚ի կատարելի
յուսահատութե՜ իւրեանց:
Նազէ մինչդեռ զօրան ոչ տե-
սանէ, ոչ շարժի, բայց իւրե՜-
տեսանէ, անհնարին թափով
ուժոյ գուն գործէ զկ՟րձմն
ոտից իւրոց խզել, և եր-
թալ հապանել որսոյն, զոր տե-
սանէ: Այնպէս լինի և մարդ-
կան՝ զի մինչ դեռ ՚ի մարմնի
աստ են չտեսանեն՝ չիմանան
զօրան, ոչ է՝ զցանկալի և զյա-
գեցուցիչ տեսիլն ա՜ծային ե-
րեսաց: Բայց յորժամ՝ մահ
ուամբ մեկնին ՚ի մարմնոյ աս-
տի, յայնժամ ձգին աչ.ք մտաց
նց ՚ի տեսութե՜ որսոյն, զի
իմանան ըստ պատշաճեալ իւ-

քեանց չափու , թէ ո՞րպիսի
ինչ, և որչափ ցանկալի է ա͞ծ :
Յու 'ի դատապարտելն իւր-
եանց սկսանին անհնարին ցա
ւօք ողբալ՝ և կոծել, ածեալ
զմտաւ՝ թէ այլ ո՛չ երբէք տես
ցեն զա͞ծ յաւիտեան : Բայց
առ ոչինչ օգուտ եղիցի նո͞ց
ողբս այս : Դարձեալ հոգին,
յաստի կեանս ընկճեալ 'ի
մարմնոյ, կայ 'ի մարմնի իբրև
կայծակն ընդ մոխրով. բայց
յելանելն իւրում 'ի մարմ-
նոյ՝ լինի իբրև զայն հուրն,
որ վառեալ հրդեհի յականս
պատերազմի : քանզի ո͞գ սա
բորբոքեալ ուժգին յարձակի
'ի վեր երթալ հասանիլ 'ի բուն
օթարան իւր , որ եթերն է
ա͞մ հրոյ . և վ͞նկ 'ի յելան իւր
'ի խոցեալ ականէ, զմեծամեծ
քանդմունս առնէ , զդիմա-
կալսն

կալսն ուժգին վանեալ վ̄ս ան
ճապաղ փութանակի անդր
հասանելոյ ։ Այնպէս և հո-
գին մարդայյելան 'ի մարմնոյ
ուժգին թափով փափաքնաց՝
ձկտի առ միջակէտն յօժա-
րութեան սրտի իւրոյ յա̄ծ ․ ըստ
ասելոյն դաւթի , ա̄ծ սրտի իմոյ,
բաժին իմ ա̄ծ յաւիտեան ․ սաղմ
72․ 26․ Նու յայնժամ, եթէ
մահուչափ մեղօք բծաւորել-
գտցի , իսկոյն 'ի բաց մերժի
յերեսացն ա̄յ իբրև պիղծ և
գարշելի քան զա̄մ՝ աղտեղի՝
թշնամի ա̄յ , և ատելի ։ Նու
դու բարւոք 'ի միտ առցես ,
թէ 'ի լինելն այսմ այսպէս ,
ո՞րպիսի դառն տրտմութի ,
ո՞րչափ սաստիկ ցաւ սրտի և
կսկիծ անտանելի եղիցի այս
նմա 'ի բռնադատիլն իւրում
կալ մնալ յաւիտենս յաւիտե

նից

նից հերքեալ զրկեալ՝ վճարէ.
յոյնպիսի երանելի յանձեղէն
կայարանէ խուռն, որ է ածային երեւայն ամենազօրաւոր
տեսութեան եւ սրտին լուսոյ ը այ
սիրով միաւորութեամբ: Յորժամ
մին ՚ի յոսկերաց խախտի ՚ի կշռ
ուածոյն, պղծնէ զանհնարին
ցաւս. իսկ որպիսի անհամեմատելի
ցաւք պղծեսցեն զմարդ յորժամ
՚ի կայից լուսեանց միանգամայն խախտեսցին բովանդակ
երկերիւր ոսկերքն աւելեօքն
հանդերձ: Արդ սակայն այս
ցաւք իւր չորք երագոյն են առ
անհնարին ցաւովքն, որով
վշտանայ հոգին ՚ի կալն մերժեալ ՚ի միաւորութենէ սեպհա
կան փախձանին, որ այն խնքն
է ած. քանզի որչափ հոգին
է գերազանց քան զմարմին,
նոյնչափ գերազանցագոյն են

ան

անմիջկն ցաւքն. քան զմարմ-
նոյ անդամոց ։ Իսկ թզի ցաւքն
են գործք բաժանման, վասն
այնորիկ որչափ առաւել սերտ
միաւորութի կայ ընդ մէջ
երկուց, այնչափ առաւել
դառնակսկիծ լինի որոշումն ։
Իսկ արդ՝ յարումն բանական
հոգւոյն յԱծ՝ ըստ ասից սբյն
Թովմայի ակուինացւոյն, է
բնական և յոյժ մեծ. քանզի
է ծայրագոյն երջանկութի նր,
առ որ ձկտի ամ ուժգնութբ
գոյութե իւրոյ ։ Վա այսորիկ
բռնութբ մերժիլն 'ի նմանէ
յանսպառ յաւիտենս, լինի-
ցի նմ տանջանք անհամեմատ
և անբաւ անհուն՝ վա երկուց.
մի է՝ վա ածային անհուն բար
ւոյն, յորմէ զրկի. և վա ժա-
մանակին, որ է անվախճան.
քանզի զրկումն նմայ միշտ և

յա-

յաւէտ անվախճանն: Ո՜, պա՜ս վա՜յ
հիգուէ մեղաւորք անձանց .
զի զի՞նչ ասիցէ 'ի լռելն զատա_
կալի ձայնս զայս . Ե՞րբ յինքն
ա՛նէծեալ 'ի հուրն յաւիտենականն :
մեկնեսջի՛ք յինէն յո՜յ քուամ_
մէ 'ի յաւիտեան . լինիլ ընտա_
կակից ընդ Թշնամիս , և ընդ
դաշնիձս անձին քոյ՝ 'ի գե_
հեանն մշտնջենականն :

Այդ 'ի սպառումադ իրս . զի բա_
զումմարք 'ի բաժանիլն յորդ_
ւոյ , և քորք 'ի զատանիլն 'ի
քերց , առ վշտի ցաւոյն՝ յեր
կիր անկեալ մեռան : Իսկ զի՞նչ
ապա իցէ 'ի մերժիլն դատա_
պարտ հոգւոց : զո՞ր մահ ոչ
կրեսցեն . այո՛ մեռցին զմահն
ոչ զայն՝ որ զցաւսն զրաւէ .
այլ զայն՝ որ հանապազ զնոյն
սկզբնաւորէ , առ 'ի չաւար_
տել զայն 'ի յաւիտեան :

Թէ վրէժըն յերեսայն տն, է արժա_
նահաս պատիժ քաւարա_
նելոյն.

Մտածեամ երրորդ, թէ այս
դաւն զրկումն մեղաւորին յե
րեսացն տն՝ ոչ է. քան զարժան
նորին աւելի ինչ պատիժ, այլ
արժանահաս արդար պատու
հաս ըստ յանցանաց նորին
փասու : Եւ պատճառն է.
զի այն կարգն, զոր մեղա_
ւորն 'ի տիեզերաց 'ի բացե_
բարձ մեղօք, այնուհետև ոչ_
ինչ այլ իրօք, բայց միայն պատ
ժովս այսուհիկ դարձուցանի
զնի 'ի տեղի իւր : Ուստի ե_
թէ ոչ կրեսցէ նա զայսպիսի
պատիժ, 'ի մասինս յայսմիկ
տիեզերքս որ է տուն ին՝ զրկեն_

պա_

պակասեալ մնայ 'ի գեղեցիկ
կարգէ անուտի իւրմէ, որ է ան
հնարին անտանելի վնաս՝ քան
զդատապարտելն մեղաւորին.
Րանգղի երկու չարիք են 'ի
մահուչափ մեղս: Մինն է
յետս դառնալն մեղաւորին
'ի յանեղ յանստեղծ խոկական
բարութեն զա̃ծային կեն նոր առ
համարհելով, և զսէր նոր մեծ
ինչ ոչ համարելով: Երկդն
է՝ դառնալն նոր առ ստեղ-
ծեալ վերերևոյթ բարին, 'ի
նմա դնելով զվերջին վախճան
իւր և զհանգիստ սրտի: Սու-
տի 'ի գիրս երեմիայ մարգա-
րէին ամբաստան լինի ա̃ծ
զինէլ, և ասէ: Զերկուս չարիս
գործեաց ժողովուրդ իմ, զիս թողին
զաղբիւր ջուրց կենաց: (ահաւա
սիկ յետս դառնալն յա̃յ.) Եւ
փորեցին իւրեանց գուբս, գուբս ծա
կոտս

ծակս, որք ոչ կարիցեն ունել զջուր։
(ահա դառնալն առ ստեղծ-
ուածս) Երեմ. 2. 13։ Նոյնպէս
երկու չարութիւնս համատարածեալ
կայ անտանելի վնասն մահու
չափ մեղաց։ Աստի այս եր-
կու վնասուցս, որք են երկու
կարգաց եղծիչք, դեղ դար-
ման առնէ ածային արգա-
բուժին երկատեսակ պատժովք
դժոխոց, որք են պատիժն զգա-
ութե եւ պատիժն վնասու։ Քան
զի յաղագս առ ստեղծուածս
դառնալոյ մեղաւորին՝ պատժէ
զնա ած՝ ստեղծուածովք, որք
են հուր, խաւար, բանտ, դառ
շահոտութի, եւ դեւք։ Իսկ յա
ղագս յետս դառնալոյ նր յած՝
պատժէ՝ զրկելով զնա ՚ի տե-
սութէ երեսաց իւրոց։ Նա
դու տես ինձ ասէ՝ թէ ոմն ար
դար եւ խրատեցի է դառնա-

տանս

տանս այս ա̃յ 'ի մեղաւորին,
քանզի մի̃ այսորիկ՝ զի անհա_
մեմատ առաւել մեծ չար է
յետս դառնալն յա̃յ՝ քան ըզ_
դառնալն առ ստեղծուածս.
պատիժն եւ՛ որ բերի մի̃ յետս
դառնալոյն յա̃յ՝ է զրկելն յե_
րեսաց ա̃յ, որ անհամեմատ ա
ռաւել կսկծելի է քան զա̃մ
պատիժս եւ տանջանս զգայու
թէ, որք առեալ լինին յա_
պայս դառնալոյն առ ստեղծ
ուածս : Եւ քանզի յետս
դառնալն յա̃յ՝ է իբրև անհուն
անարգանք՝ որով մեղաւորն
անարգէ զա̃ծ, պարտ էր և
պատժոյն վնասու լինել ան_
հուն : բայց քանզի մեղաւորն
ոչ է ընդունակ անհուն տան_
ջանց, փոխանակ զի է չափաւոր_
էակ. վ̃ն ը̃ մեծութե̃ այն_
պիսի անարգանաց մեղաւո_
րին՝

րին՝ պատիժս այս ունի զան_վախճանութիւն . այլ և է զըր_կումն յանհուն բարւոյն ժա_ռանգութենէ ։ Նա և 'ի մէջ այսո_ցիկ արդարութիւն Աստուածային զօրութեամբ իւրով տանջէ, զի մեղք մեղաւորին 'ի դժոխս ըմբռնեսցէ զչարիս իւր սաս_տիկ յոյժ, զոր և միշտ խորհես_ցի՝ և ոչ երբէք կարասցէ հե_ռի առնել զայն 'ի մտաց իւ_րոց ։ Նա և այսու՞իկ տայ Աստուած նմա զտանջանս ինչ միաւորական, որ եղիցի իբրև անհուն ։ Այ զի բանայ Աստուած զմիտս նոցա, և այ_նու իմանան, թէ որչափ մեծ է վնասն, զոր արարին յանցա_նօք իւրեանց, և որչափ մեծ է ըստ նմին պատիժն վնասու, որ է զրկիլն 'ի տեսութենէ Աստուծոյ. Ճա_նաչելով կերպիւ իմն՝ թէ որ_չափ մեծ բարի է Աստուած, յորմէ զրկե_

զրկեցան, և ոչ ևս կարեն տե
սանել զնա ։ Սոյն այս այնչափ
ցաւագին խոկումն մեղաւո-
րին՝ լինելոց է յաւէժաբար ,
մինչև ոչ ևս վարկեան մի կա-
րասցեն մոռանալ ։ Յայսմ
վայրի ունիս ՚ի միտ առնուլ
զհրաշալի գործն արդար իրա
ւանցն այ · զի նոյն ինքն, որ է
անբաւ լոյս իմանալի, յարքայ
ութեն իւրում լուսով փառաց
բանայ զաչս մտացն արդարոց
և պայծառացուցանէ՝ տեսա-
նել զածութիւն, և զամ ըղձա
լի բարիս , զի ուրախութե
ցեալ յաւիտեան ցնծասցեն ։
Իսկ ՚ի դժոխս զաչս մտաց դա
տապարտելոցն բանայ լուսով
պատժի , ոչ զի տեսցեն զած-
ութիւն տեսութե երեսացն ,
և ուրախասցին , այլ զի՝ ար-
տաքսական իմն ճանաչողու-
թե

թէ զօրագոյնս ճանաչեսցեն
զնոյն ըղձալի մեծ վայելչութին
յորոց վայելմանէ վն յանցա-
նաց իւրեանց զրկեցան. միան
գամայն տեսցեն և զթշուա-
ռութին անձանց իւրեանց և
սաստկագոյն ցաւօք սրտի
տանջեսցին: Ի՛ և այս, զի
պատիժս այս թէպէտ ամ̃ դա-
տապարտելոց է հաւասարակ,
բայց որոց բազումեն մեղքն,
նոքա վն բազումպատճառաց
զրկլին 'ի տեսութէն այ. և ո-
րոց սակաւ են մեղք, նոքա վն
սակաւ պատճառաց ընդու-
նին զայս զրկումն: Ա̃ այսո-
րիկ ա̃ծ զմիտս բազմամեղիցն
առաւել բանայ տեսանել
զայս զրկումն և զթշուառու-
թիս իւրեանց՝ ո̃պ զի և խստա-
գոյնս տանջեսցին. իսկ սակա-
ւամեղիցն՝ սակաւ, և այսպէս
իւ-

իւրաքանչիւրոք ըստ չափու յանդգանաց իւրոց կրէ զտանջանս: Սաստի յոյժ անմիտ են մեղաւորքն այնոքիկ, որք յաձախեն 'ի մեղս՝ ասելով. եթէ ունիցիմ զբիւր մահուչափ մեղս՝ երթամ 'ի դժոխս. և եթէ զմի միայն ունիցիմ մեղս, նոյնպէս երթամ 'ի դժոխս. ապա մի և նոյն է գործելն զմի մեղս, և գործելն զբիւրս: Ա՜յ կուրութիւնքդ, ո՜վ թշուառական, այդպէ՞ս գնաս ը̃ն տ̃ն, ընդունիլ զգութ 'ի նմանէ. այդպէ՞ս հատուցանես, զի տացէ քեզ զշնորհս չանկանելոյ 'ի դժոխս 'ի հուրն անշէջ: Այո՛ այո՛ որ այդուիկ չափութ̃ե մոլի, անկցի անտարակոյս 'ի տարտարոս գեհենոյն, ուր ուսցի իւրովք փորձուք, թէ զինչ տարբերութիւն կայ 'ի մէջ

սակաւամեղին՝ և բազմամե_
ղինն : Ո՛վ որ միով յանցուա_
ծով երթայ 'ի դժոխս, ընկալ_
ցի զտանջանս իբրև զմի միայն
դժոխոց, իսկ որ բազմօք՝ ըն_
կալցի զբաղումտանջանս իբր
բազում դժոխոց . քն̃ է ընկալ_
ցի զմի տանջանս բազմապա_
տիկ սաստկացեալ : ո՞վ եթէ
մեղք իւր իցէ հարիւր, հարիւ
րապատիկ ևս սաստիկ իցէ
տանջանք իւր, թէ ըստ տան
ջանաց զգայութեան, և թէ զրկ
մանն . և ըստ այսմ վո̃ հարիւր
մեղացն, իբր հարիւր անգամ
դատապարտի 'ի հուր գեհե_
նոյն : Զարմանք մեծ այս են,
զի մ̃ք զգուշութ̃ի յառնուլն
մեր երակ, որոշեմք ը̄ մէջ
նշտրակի, և երակահատի .
թէ արդեօք նշտրակն հատու
իցէ՝ թէ բութ. արդեօք ձեռն

երակահատին մեղմիցէ, թէ
խիստ. այս ոճի հնար է հասա-
նել յանհնարին անմտութիւ-
յայս, մինչև ոչ զանազանես-
ցուք ՚ի մէջ միոյ տանջանաց
յաւիտենականաց, և ՚ի մէջ
բազում տանջանաց յաւիտե-
նից, զորս հնարեաց ամենի-
մաստն ա̄ծ՝ սրտմտեալ ՚ի վե̄
ապերեաց իւրոց: Այս ստու-
գիւ ոչինչ են ինձ զարմանք, զի
ս̄բ. գիրք զմեղաւորս կոչեն խե-
լագար, ոչ միանգամ, այլ հա-
բիւրաւոր անգամ, զի իսկ և
իսկ արժանի են այնմ: և թէ
զայլ խելագարս կապեն տու-
ամբք, պարտէ զն̄ա կապել
շղթայիւք:

## Աղօթք առ Քս Յս՝ վն ընդունելոյ հաղորդութե ։

Յս քս արքայ երկնաւոր, բարձրեալ՝ ահաւոր, փրկիչ ազգի մարդկան, կենաց ապաւէն ։ որ գոլով՝ ի կերպարանս ա̃յ յանսկզբն յաւիտենից, ծառայի առեր կերպարանս յամենամաքր կուսէն՝ ՚ի փրկել զմեզ յաւիտենից կորստենէն ։ Սրբութի մեղաց մերոց արարեալ քաւիչ քո արեամբ, զոր ՚ի հնգեակ աղբերաց մարմնոյդ առատապէս վն մեր հեղեր ։ Համբարձար յերկինս, և նստար ը̃ աջմէ մեծութե̃ն ՚ի բարձունս, լինել բարեխօս առ հայր վն մեր ։ Վ̃ այսորիկ յիրաւի քա

Ջալերէ զիս բանն ծառայի.քոյ
սրբյն Բեռնարտոսի՝ յասելն ու-
րում, թէ ո՛չ ումեք պարտ է
զյոյս իւր հատանել՝ իփրկու-
թե՝ թէպէտ և մեծ մեղաւոր
եւս իցէ ։ Օ՛ի յորժամ մեղա-
ւորն զմեղս մեղաց իւրոց հօրն
երկնաւորի Ճշմարիտ ապաշ-
խարութե՟ առաջի դնէ, յայն
ժամ և յո.քն զմեղս իւր երկ
նաւոր հօր իւրում ցուցանէ,
և առ 'ի նմանէ զողորմութի
հայցէ ։ Ո՞վ երջանիկ աւետ-
եացս ։ ո՞վ անչափ մարդասի-
րութե՟ փրկչիդ իմոյ ։ Ես արդ-
աւասիկ և ես նշուլիւք շնոր-
հաց քոց զանօրէնութիս իմ
բազմապատիկ 'ի միտ առեալ,
և 'ի սաստիկ զղջման սրտի
հարեալ, 'ի դոյն յամենայն
սալիս քո ապաւինիմ ։ Ջայց ա
ղաչեմ հօր քում երկնաւորի

մէ

վն իմ՝ զամենակեցոյց զյաղ-
թանակաւոր՝ զ՚ի մարմնի.քում
պահեալ խոցոտեալ. տիգին,
և զբևեռաց, արժանի առնել
զիս դոքօք յաւիտենական ո-
ղորմութեան ։ Մի՛ փոխեսցես՝
մաղթեմ, զամենասուրբ ա-
նունդ քո, որ բոլորովին լի է
յուսով և քաղցրութեամբ · և է
յիս յոյս ։ Յորդաբև մեծ եղև
՚ի վր իմ ողորմութեն գթու-
թեն քո, յազատել զիս գնով
արեանն քո ՚ի խորոց անտի ՚ի
դժոխոց ներքնոց, բայց առ-
ի՞նչ օգուտ լինի ինձ այս՝ եթէ
ես մեղօք անդրէն ՚ի դժոխս
գահավիժել զիս դարձայց ։
Ի՞նչ օգուտ է քեզ յարենէ
իմմէ, թէ իջանեմ ես յապա-
կանութիւն, զի ոչ եթէ մե-
ռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ
որք՝ իջանեն ՚ի դժոխս ։ Ա-

թող ես դու Տէր իմ, ամենայնու_
ցանել զիս՝ և պահել, զի մի՛
դարձայց անդրէն 'ի մեղս՝ և
կորեայց: քանզի 'ի ձեռս քո
են վիճակք իմ, ով հոգերգո_
ղին բանի, և դու ես ամենա_
զօր փրկիչ իմ: արդ ողորմեա՛
վն̃ վիրացդ այդոցիկ ոբյ. և
առաջնորդեա ինձ գնալ միշտ
ըստ լուսաւոր պատուիրանաց
աւետարանի քում՝ ոՏյ: Եւ
զգուշացուցեալ զիս 'ի լայն և
'ի յընդարձակ ճանապարհէն
որ տանի 'ի դժոխս, ուղղեա՛
զնեղ և անձուկ ճանապարհն
որ տանի յարքայութիւն երկ_
նից, ուր ժամանեալ քոյին
առաջնորդութեամբ, փառաւո_
րեցից զքեզ ընդ Հօր՝ և ընդ սբ Հոգ_
ւոյդ 'ի յաւիտեանս յաւիտե_
նից: Ամէն:



5

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ

## Հինգերորդ.

### Ա. Հինգ շաբաթու աւուր :

Յաղագս որդանն խղճի մտաց որ կրծէ զսիրտս դատապարտելոյն :

Մտածեա՛, թէ զո՛ր օրինակ 'ի դիակունս մեռելոց՝ 'ի նեխութէ ծնանին որդունք, սոյնպէս և յապականութէ մեղաց ծնանի 'ի դատապարտեալսն հանապազորդ խայթ առգտմանց սրտի

տի, և անուանի սա որդն խղձի մտաց. որ զայրագին սրտմտութե կրծէ զխորտանջ, և ոչ փոքր մի ներէ նոցա հանգչել: Աւասիկ ասէ տէրն մեր 'ի մարկ. 9. որդն նոցա ոչ մեռանի: Եւ դու տես աստ, զի ոչ միանգամ, այլ երիցս կրկնէ զայս տէրն մեր 'ի մի և նոյն կանխասացութե, յայտ առնել մեզ զսաստիկ ծանրութի այս տանջանաց: Օ խիղձն մտաց ոչ միայն 'ի հանդերձեալն, այլ և յաստի կեանս իսկ անողորմ դահճի վարկանին մեղքն: Այն մեծն օգոստինոս 'ի մէկն երեսուն և վեցերորդ սաղմոսին ասէ. թէ նոյն ինքն է իւր պատժանք, որ չարչարէ խիղճն մարդոյ: Եւ սուրբն գրիգոր 'ի մէկն 143. երրորդ սաղմոսին ասէ, թէ 'ի մէջ անհամար պատուհասաց մարդոյ

ոչ

ոչինչ է մեծագոյն չէշխ՝ զանազանեղծն
յանցանաց: Բայց եթէ երկու այ-
սորիկ զկեանս դիցուք առաջի,
յայտ է, թէ խիղճն մնայց
յաստի կենաց առնէ մանա-
ւանդ զգործ նահիրակի դա-
տաւորաց, իբրեւ թէ կոչելով
զմեղաւորն յատեան ա̃ծային
քան թէ դահճի, չարչարելով
զնա : Իսկ զգործս դահճի
առնէ 'ի դժոխս, քանզի յոր-
ժամ դատապարտի մեղաւոր
հոգին, և անդարձ վճռով մատ-
նէ զնա դատաւորն 'ի ձեռս
դահճի, յայնժամ տայ զնա 'ի
ձեռս խղճին մնայց անդադար
տանջել, և ոչ երբէք թոյլ տալ
նմա վայրկեան մի հանգչել:
Ճշմարտ՝ այս որդն, որ առա-
ւել անողորմ է. քան զքարբ օձ,
զերկս խոցս դնէ 'ի խիղճս դա-
տապարտելոյն, զորս ունիմք
թա-

բացատրել բանիւք երրորդ-
յենովկենտիոսի պապին. զի
ասէ 'ի գիրս յղ֊դօ արհամար-
հելոյ զաշխս, գլ. 1. պանծեսցէ յեղա-
փոխս, խոնարհեցուսցէ անձագան
ողջութիւն, և չարչարեսցէ տագնա-
պաւ։

* * * * * * * * * * * * * *
* * * * * * * * * * * * * * *

Թէ որդն խղճի մտաց տանջէ 'ի
յիշման անցեալ զուարճութեանց։

Որդն խղճի մտաց տանջէ
զդատապարտեալսն՝ նախ՝ յի-
շատակաւ անցեալ զուարճու-
թեցն, որովք յաշխարհի աստ
ձոխացեալ էր։ Եւ արդ՝ խոր
հեաց դու և 'ի միտ առ՝ թէ որ
չափ դառն վիշտ լինի մարդոյ՝
որ լեալ յառաջ մեծատուն՝
յանկարծակի անկանի 'ի յե-

տին տնանկութեան . ոմն զայս
յայտ առնէ երանելին յոբ՝
յասելն զանձնէ իւրմէ . Ինչ
պէս ՚ի խաղաղութեան էի, ցայցայեաց
զիս : յոբ . 16 . 13 . Ապա զինչ լի
նիցի մեծաւորին՝ և զինչ ա-
սասցէ ՚ի սանդարամետ տան
դժոխոց՝ յիշելն իւրում՝, թէ
ինքն երբեմն էր հզօր, և հրա
մայէր այլոց իբրև իշխան,
մինչև անարգել և հայհոյել և
զԱծ . իսկ այժմ՝ ՚ի դժոխս չու
նի և ոչ զօրութիւն կողմնէ ՚ի
կողմն դառնալոյ, կամ զմատ
մի շարժելոյ : Երբեմն ՚ի խն-
դիր պատուոյ՝ ընդ հզօր իշխա
նաց մարտնչեալ պատերազ-
մէր, և զօրնայր ՚ի վերայ, իսկ այժմ՝
՚ի ներքոյ ոտից դնեալ է կո-
խան անկեալ : Շրջեսցին ասէ,
արհաւիրք ՚ի վերայ նորա : յոբ . 20 . 25 :
Երբեմն ՚ի փափկութեանց փափուկ

անկողինս ննջէր · այժմ 'ի հուր՝ 'ի ձիւթ , և 'ի ծծումբ կայ ընկղմեալ ։ Երբեմն 'ի քաղցրանուագ ձայնս երգոց զուարձանայր · իսկ այժմ՝ 'ի ձայն ողբոց և յաղաղակս կականաց չարաց տառապեալ տագնապի ։ Երբեմն 'ի համադամ կերակրոց՝ և յանոյշ ըմպելեաց զարդարեալ սեղանովք բերկրեալ փափկանայր · և այժմ՝ փշրանաց մխիթարութէ , և կաթիլ մի ջրոյ 'ի զովացումն աղաղակեալ քմացն իւրոց կարօտի , և ոչ տուեալ լինի ։ Այլ և խորտակաձայն մեծատունն 'ի դժոխս թաղեալ աղաղակէր , թէ պապակիմ 'ի տապոյ աստի · բայց ոչ որ տայր նմա մինչև ցկաթիլ մի ջրոյ 'ի զովացումն քմաց նորա ։ Ղուկաս · 16 · Երբեմն յա֊

ապա֊

սպարանից խորոյ յընդարձակ
ընակարանս , և 'ի պէսպէս
զբօսանաց զուարճալի վայրս
նեմ՝ առեալ շրջէր , խաղայր ,
խաղմէր , և հանգչէր՝ ուր և
կամէր , և արձակ ազատու-
թ̃բ ըստ կարողութեն իւրում՝
զի՛նչ և կամէր՝ առնէր . այժմ
տեսանէ զինքն 'ի դժոխային
բանտի անդ անձկապէս փա-
կեալ : Որոյ յարկն է հուր ,
որմունքն էն հուր , յատակն է
հուր , և որ զներքն յարկին
պատեալ է , նոյն իսկ է հուր . և
ինքն իսկ գլխովին է հրա-
պեալ իբրև զերկաթ շանթա-
պեալ : Չորեքին գլխովին մխեալ
էր զանձն 'ի յանձնդիւր լինիլ
և 'ի հաճել զմարմին և զհոգւո
իւր պղծալից ցանկութե, այժմ
տեսանէ պաշարեալն զինքն
յամենայնմանց ցաւք և վա-

տակք, տանջանք և վայ 'ի վայ վէր, ողբալ և կոծել, լալ և կրճել ատամանց, և միանգամայն ա՟մ բարեաց կարօտութ՟ի, և համօրէն չարեաց կուտակութ՟ի հաշիլ, և յետին յուսահատութ՟ի հեղձամղձուկ սատակիլ։ Ո՜վ յանկարծուստ անկարծ սոսկալի փոփոխութեա։ Ո՜վ անձար անհնարին դառնութե յիշատակիս անձնդիւր կեանս վարելոց։ Յաստի կեանս որք 'ի վշտալից վարանումն խորհրդոց ինչ տագնապին, կարեն զայնպիսի խորհուրդսն վայրկեան մի 'ի բաց զնել 'ի քուն լինելով, կամ 'ի զրոյցս ը՟ն այլս սպարապելով. կամ արգահատութ՟ի բանս 'ի բարեկամաց լսելով. և կամ 'ի նորատեսիլ զբօսանս ինչ զմիտսն պատաղելով, բայց 'ի

գժոխս զայսպիսի տաղնա-
պիս խորհուրդս փոքր մի 'ի
բացընելոյ ոչինչ կերպիւ է հնա-
րաւոր ։ զի սոքա են որդն ան-
քուն ․ և սատեան մշտատաս ․
որք զտիւ և զգիշեր անհան-
գիստ կրծեալ մաշեն զխիղս
մեղաւորաց ․ Վայ ասէ յոբ , ըստ
թարգմանութե̃ն դալմատաց-
ւոց ․ Որք ուտեն զիս , ոչ ննջեն ,
յոբ․ 30․ 17 ։ Ապա ճշմարտիւ
անկար է դատապարտ հոգ-
ւոյն՝ խորշել՝ մերժել 'ի խորհր-
դոց իւրոց՝ ոչ կարէ զանձն զբաղե-
ցուցանել յիւրս ինչ , այլ հար-
կի ակամայ կամօք միշտ յառ-
եալ կալ 'ի նոսա ։ Իսկ արդ՝
մտածեա՛ ո՞վ եղբայր , թէ զինչ
թուեսցի դատապարտելոյն
կարծիք զուարճութիւն այն ,
զոր նա հակառակ օրինացն
ա̃յ , առ կենդանութե̃ իւրում

իւր բուամբ յափշտակեաց ՚ի
ստեղծական էակաց ։ Եր-
կիրս նկատեալ առ ՚ի գագա-
թանց երկնից , և ոչ կէտ մի
թուեսցի . զինչ ապա վաղա-
թարշամ կեանք մարդկան ,
եթէ նկատեսցին յանդնդա-
խոր յաւիտենականութ՟ե ան-
տի ։ Եթէ ՚ի հոգեւորս թուի
մեղաւորին բովանդակ կեանք
իւր իբրեւ զքուն վաղան-
ցուկ , և իբրեւ զերազ ածան-
ցական ։ ապա ո՞րչափ թուեսցի
նմա բովէական փափկութի
իւր՝ յանտանելի տանջանան
գեհենոյն բորբոքելոյ՝ յանդա-
նել բազմաւք իւր դարուց ժա-
մանակաց ։ Ի ժամն իսկ շաւ-
եր տանջողական հնոցին, զմի
շատակն մեղաւլից զուարճու-
թեցն առնել ամենազգօնելի
ո՞չ ասէ Սիրաքայ. 11. 29. Աշ-

դէ…

ղէրս Բղոմաստանութեց ծառոս , ՚ի նո
ռայցանս տարջոյանսն ընտանձնութե
Բծանձս : Որդ՝ դու լինքնին
տուր զկրաւն.եթէ չարիք միոյ
ժամու ապականէ զյիշատակ
մեծամեծ հեշտութեց , ապա
զինչ արասցեն աններելի պա
տուհասքն , զինի հոլովելոյ
ընթացարեան ամաց՝ ի դժոխա
այն՝ անտանելի արասցեն զյի
շատակն զազրոտի , և բոպէա
կան զուարճութեց՝ իբրև զըստ
ուեր անցելոց . և ՚ի յաւիտե
նականն տանջանս փոխելոց :
Որքա որք ապախտ առնեն
զհոգի փրկութե հանդերձ ,
վն չարանոխանձ մեռամար_
տութե ինչ. կամ յաղագս չըու
ծանելոյ զդաշինս մեղաման_
կարգս . կամ սակս չարձակե_
լոյ ՚ի բաց զկին պակշոտեալ.
կամ առ չներելոյ անիրաւու_

թեց ընկերին . կամ զի բար_
ձրացուցեն զտուն իւրեանց .
զինչ ասասցեն յորժամ տես_
ցեն 'ի լուսաւորի մ՛թութե աղ_
ջամղջին , զյիշատակ ընտա_
նեաց բնաջինջ եղեալ . զկին
սիրելի որդնահար ապական_
եալ . զօթարան բնակութեն
'ի մոխիր դարձեալ , զգաւա_
հայրենիս ո՛մ կողմամբք երկրի
լափեալ և ապականեալ 'ի հրա
հեղեղ կիզմանէ աւուրն դա_
տաստանի ։ Անտանելի տան
ջանք էին , եթէ ոք ընտրէր
վասն հազարամեայ բերկրա
նաց ամենատեսակ հեշտու_
թեց կալ զգիշեր մի 'ի հուր
բորբոքեալ ։ Իսկ զինչ ասա ,
թէ ոք ընտրեսցէ զյաւիտ
ենիս յուսահատութե կալ 'ի
սանդարամետս լցեալ անշէջ
հրով , անպատմելի տանջա_
նօք

նոք, և մեք չարեօք, ոչ զի արժ
ցէ զումպ մի թունոյ ամոքելն
կրից կոկորդայ, ողբալ առ
յապայ Է, յուսահատութեան՝ ասե_
լով. Ճաշակելով ճաշակեցի սակա-
ւ մեղր, և ահա մեռանիցիմ ես ։ 1.
Թագ. 14. 43 ։ Ո՜վ մեծ անզգաս-
տական. ո՜վ յիմարութիւն անզգու-
շական ։

Թէ որդն խղճի մտաց տանջէ
անագան զղջութեամբ ։

Մտածեա՛, զի երկրորդ
խոցն՝ զոր կատարէ որդն
խղճի մտաց առնէ, է անա_
գան զղջումն դատապարտեալ
մեղաւորացն, որ հասանէ նոցա
յանկանելն իւրեանց 'ի դժո
խոյս, ուր այնուհետև առ ոչ

ինչ օգուտ է զղջումն : Եւ դու
'ի միտ առցես յայսմ զզարմա-
նալին , զի մեղաւորքն երբ
գործեն զմեղս , թուի այնոց
որպէս զոր ինչ կատակս գործեն ,
որպէս ասի առակաց . 10.23. Որ-
ծաղելով գործէ անզգամն չարիս :
Եւ ոչ ինչ աւելի չար համարին
զայն , բայց եթէ անմիտս եւ
անկակիծ տգեղութիւն ինչ: Ա
նուանեն զի եւ պարծանս ան-
ձանց համարին . վասն զի եր-
բեմն յօրացեն 'ի վերայ չարեաց իւ-
րեանց՝ պարծին զնոցանէ, իբ-
րեւ թէ բիծքն մեղաց 'ի հո-
գիս նշան իցեն իբրեւ զբիծս խայ-
տափիտ մարմարիոնաց 'ի վայ-
ելչութիւն : Բայց 'ի դժոխս
ոչ այսպէս այլ ինչ այլոյ երեւես-
ցի չարութիւն եւ տգեղութիւն
մեղաց , այլ այնպէս՝ որպէս եւ է :
Եւ ծանիցեն զայս յայնժամ

յոր-

յորժամ տեսութիւն մէն միոյ մնհուչափ մեղաց առաւել տանջեացէ զնոսա. քան զտեսութիւն այլ ոմն դժոխային ահուր դժնդակաց։ Նորանուհին կատարինէ յենուայնն լուսաւորել հոգւոյն յայտնագոյնս ճանաչէր զճշմարտութիւն ասացեալ բանիս։ Սուրբն աղաչէր զԱծ տալ իւրեան 'ի ժամու մահուան իւրոյ տեսանել մանաւանդ զոմն դիւային տգեղութիւն իւրեանց՝ քան ցուցանել զտգեղութիւն միոյ և եթէ ընդդէմ կամացն Այ արարեալ փոքրիկ գործոյ։ Նաև արդ՝ եթէ տեսութիւն միոյ և եթ փոքրիկ մեղաց տգեղութե այսչափ դժնդակ տանջանս բերէ տեսողին, ապա որչափ սաստիկ դժնդակ տանջանս կրեն դատապարտեալքն 'ի

գժուխս՝ 'խոստանալըն իւրեանց
զահուր պաշիր ագեղութիւս
այնքան բազում՝ մեծամեծ
ոճրագործութեց։ Սան զի
ճնձային արդարութին 'ի միտս
դաստապարտելոյն սաստկա-
գոյնս սեւեալ զոտեսութիւն
չարութե մեղայն զոր գործե-
ցին, միանգամայն և 'ի կամս
նոյ բևեռեալ զսաստիկ զզուռումն
առանց կարող լինելոյ երբեք
'ի տեսութէ իւրեանց անկա-
փել։ Ըստ տիտղոսն բռնավէն-
դուրս 'ի. 4. մատենի. 50. բա
ժանման, խնդիր վերջին. ա
սէ Նորտար դապաստանման ոյ զան
մեղան յիշեն, ի յաղագս ամենեցուն
անդապար պանջին։ Ներ ոչին 'ի
վերայ հասեալ եռես զոյն 'ի
մեղս ՃՀ կնոջ իւրում, և 'ի
սաստիկ նախանձ վառեալ՝ ան
գիտ վազվաղակի կալաւ զնա,
և

և կապեալ զձեռս և զոտս նր՝
ետ կնոջ իւրում կախել զնա 'ի
սենեկի միում, և զկինն 'ի սե-
նեկի անդ արգել զբազում ա-
ւուրս, մինչև մարմին կախե-
լելոյն նեխեալ հոտեցաւ. և
կինն 'ի սաստիկ գարշահոտու-
թէ անտի վտանգեալ անդէն
մեռաւ: Եւ արդ 'ի միտ ա-
ծես դու աստ, թէ ապա ա̃ծ
այլին ուղղադատ, և ամենի-
մաստ արդարութին որչափ
առաւել լաւ գիտէ առնուլ
զվրէժ 'ի մեղաւորաց կախե-
լոյ զշաղիողն իւրաքանչիւր մե-
ղաց հանդէպ աչաց գործողին
մեղաց. և 'ի նոյն ազդելով,
որ զի անդադար նկատեալ և
յիշեալ զապիրատութիս իւր-
եանց՝ տանջեսցին 'ի գարշու-
թէնդ: Աստի ասէ ա̃ծ 'ի քա-
ռասնև իններորդ սաղմոսի.

Յան-

Յանդիմանեսցես եւ հատուցեսցես զայս ամ-
բաստանէ ինձ : Յորոյ վերայ սակս
սրբոյն օգոստինոս · Աղաղակեաց ա-
ռաջի իմ՝ ո՛չ ըստ առաջնեցն այսպէս
ապաշխարեցէ: Ա՛րդ՝ տեսանես այս
լինելոց է յայժ սուր եւ յայտ-
նի · զի ամ՝ 'ի դժոխս հաղոր
դէ մեղաւորաց 'ի ձանձրացմանէ
անտի, որով ինքն ձանձրացէ ըղ-
ձաղթարութեան մեղաց · ա-
տի եւ նորա հաղորդութեան այ
սուրբ զմեզ ի բերանց տեսա-
նեն այնուհետեւ եւ այնչափ չար,
որպիսի եւ որչափ չար է ըստ
ինքեան, եւ ամ այ երեւի · այ-
սինքն է՝ իբրեւ անհնարին ա-
հուր պատիր անդունդ այլան-
դակութեան եւ չարութեան · եւ ոչ
չար ինչ թեթեւ եւ չնչին, որ-
պէս այժմ համարին : Ա՛
որոյ սակս սուրբն թովմաս :
Յայնժամ ամօթեան եմպայ, թէ զէ՛նչ

կա-

համարէր ա՟ծ պնեղս ։ Այս թշուա
ռական դատապարտեալքն
տեսեալ զկանոնն ա՟մ՝ բարեաց
զա՟ծային կամին ասեմ․ և մի-
անգամայն զանուղղայ թիւ-
րութ՟ի իւրեանց առ ուղղութ՟ի
այնր կանոնի, կարգեցեն ան
ձանց՝ հակառակ չարութ՟ե
զանհնարին աղէտս տարակու-
սի, զոր գուշակէ յոբ ․ 7․ 20․
Ընդէր զիս ասէ, քեզ ոսոխ, և իցեմ
անձին բեռն ։ Այո՝ ողբալով ող-
բասցեն զանօրէնութ՟իս իւր-
եանց անսպառ կականօք, սա
կայն երբէք ը՟ ա՟յ հաշտ մի լի-
նիցին ․ վ՟ն զի ատեցեն միայն
զայն, զոր սիրէ ա՟ծ, այ՟ է,
զպատիժ պատուհասիցն ․ և
սիրեսցեն զայն, զոր ա՟ծ ատէ,
այ՟ է, զանօրէնութ՟իս ։ Աան
որոյ ասէ ս՟ն բեռնարդոս ․
Մնաս երբէք ողջողջն և բերան չի-

ւէա-

ածանէն, զի մինանց հակառակ են. 'ի հինգերորդ մատենի յա-ղագս, խոկմ. գլ. 11. Սմ ան-քաւ աղետից. ո՜վ անհան-գուրժելի թշուառութեանս. զի զի՞նչ ապականութի մեծ՝ քան միշտ իմանալ զանչափ չարիսն անօրէնութե, և միշտ սիրել զնոյն. միշտ զղջանալ վն ապի րատութեցն, և միշտ զապի-րատութիւն սաստկացուցա-նել: Այս է յանդգնութի անսահմանելի, զորմէ մար-գարէն բողոքէ: Ամբարտաւա-նութիւն ատելեաց քոց ասէ՝ ելանէ հանապազ: Սղմս. 73. 23. Նու-արդ՝ առաքեալ են բանք իմ՝ ո՛վ մեղսասէրդ՝ զի է զի անօրէնութի-քո մատնեն զքեզ այսմ յաւի-տենական անշահեկան զղջման. իսկ դու փոխանակ խուսելոյ 'ի նոյանէ ապաշխարութեամբ,

նո-

նորանոր մեզօք հանապազ յար
ձակիս 'ի նոյնս, զի՛նչ առ քոյդ
յանդգնութի՛ւ ասասցից · զո՞ր
բանս յօրինեցից պատշաճա_
կանս առ 'ի յանդիմանն խայ_
տառակել զյիմարութիւս զայս
անխիմանալի ։ զի եթէ խորշիս
անմեհեր խնամովք 'ի չնչին
մխասանէ · ընդէ՞ր յանդուգն
երագմամբ վարիս զհետ քոա
մեղլի վտանգաց · մինթէ փո_
փոխի՞ բնութի քո , յորժամ
առաջի լինի քեզ վտանգյա_
ւխտենական փրկութե ։ բան
սարկո՞ւ բանսարկու , արմնա
անխծից , աղբիւր չարութեց,
ո՞ւր գտեր զայս թովչութի
այսր կախարդանաց , այսչափ
դժնդակ , որով ապշեցուցեալ
յանզգայութի դարձուցա_
նես զմեզաւորս ։ ՏԷՐ դու
սփրեցեալդ 'ի քո , որ յայս գիր

ակն արկանես, լո՛ւր ինձ խոր-
րատուիս, անսա՛ բարբառոյ
քեզ թելադրողիս. զայս բան
հաստատեա՛ անջինջ 'ի յիշա-
տակ մտաց քոց, որ է. Հայ-
եա՛ց 'ի վախճանն. մի՛ հայիր 'ի
յայն վաղանցուկ փոքր մի քաղց-
րութին, զոր ցուցանէ քեզ
մեղքն 'ի գործելն, այլ հայ-
եա՛ց 'ի վախճանն, որ է անօ-
գուտ դառն զղջումն, զոր ըզ-
հետ իւր բերէ մեղաց գործո-
ղութին 'ի դժոխս։ Հայեա՛ց
ասեմ 'ի վախճանն, հայեա՛ց 'ի
վախճանն։

## Թէ որդն խղճի մտաց տանջէ յիշատակաւ զանցառութեան մեղաւորին զյապաղած ժամանակօք ապաշխարութեան։

Մտածեա՛, զի երրորդ խոյն, զոր ’ի սիրտս դատապարտեալ մեղաւորացն դնէ որդն խղճի մտաց, է անչափ վիշտն յաղագս զանցառութեան նոցա զբազում ժամանակօք, յորս եթէ ’ի գործս փրկութեան անձանց իւրեանց պարապէին, փրկեալ լինէին, և ոչ դատապարտեալ։ Եւ այժմ ’ի դժոխս ստուգիւ գիտեն, զի անհնարին է ինքեանց յայնչափ կորուսեալ ժամանակաց զդոյզն մասն ընդունիլ, և ’ի նմին ձայր

աս-

առնել անձանց իւրեանց ։ Որով հետեւ արդէն հաստատեալ է յոյժ երդմամբ . Թէ յետ աստի կենացս՝ այլ ոչ երբեք եղիցի ումեք ժամանակ ձօր առնելոյ անդէն հեղգութեան՝ որք աստ 'ի յայտնութեան . 10 . 6. Եւ հրեշտակն համբարձ զձեռն իւր դէպ յերկինս , եւ երդուաւ 'ի կենդանին յաւիտենից, թէ ոչ եւս կայ այլ ժամանակ ։ Ո՛յս՝ ում՝ իրօք անփոխադրելի վճիռ՝ անդառնալի ցաւօք տանջէ զդատապարտեալս . եւ սաստիկ ձմլէ զսիրտս նոցա անմխիթար ողբովք անդադար լալ․ լեանն եւ տագնապին , զի անդադար յիշեն , թէ ոչ եւս եղիցի այլ ժամանակ ։ Այն 'ի սրբոց կրօնաւորաց լուաւ երբեմն յումեմնէ ոգւոյ զձայնս ողբոց այնչափ աղիողորմ լալոյ , մին_

մինչև բաւական լինիլ և զքա-
րացեալ սիրտս կակղելոյ։ Իբ-
րև եհարց զնա թէ ո՞վ ես դու.
և զի՞նչ է պատճառն այդչափ
ցաւոց քոց։ Պատասխանի ետ
և ասէ. ես եմ մին ’ի հոգւոց
անտի դատապարտելոց, և
լամ ընդ ընկերս իմոյ աւա-
ղեմ ’ի վր̃ կորուսեալ ժամանա-
կի իմոյ՝ որ ոչ երբէք կարէ յետս
դառնալ, քան ’ի վերայ այլ-
ամ՝ թշուառութեանց։ Գրեալ
է զայս պատմութիւն Դրեքսե-
ղոս յաղագս դատապարտ. ’ի
հատընտիր. գլ. 3։ Եւ ահա
’ի յանստագիւտ բանից զոր ’ի
այլ գրոց յառաջ բերաք, միան-
գամայն և ’ի պատմութէ սա-
տի տեսանի, թէ ո՞րքան պա-
տուական է ժամանակն, և
որչափ մեզ պիտանի և օգտա-
կար անձանց մերոց ’ի յաւիտե-

նա-

նական փրկութեան: Բայց ես
որո՞վ համարկութեամբ աւաղե-
ցից զհեղգութիւն մարդկան, որ
զայսպիսի արքայութիւն արժիչ
ժամանակս կորուսանեն վատ-
նեն 'ի դատարկաբանութիւնս,
'ի յաւելորդ խաղս, 'ի սնոտի
զուարճութիւնս` 'ի չարաչար
կիրս սիրոյ` և յամենայն մեղաց ա-
պիրատութիւնս: Ո՞վ գեր-
արժանի անգին ժամանակ.
ո՞վ թէ որպիսի ահաւոր, և
սքանչելի գնացս վարես դու
առ մեօք, և ո՞րչափ արթուն
զգաստութեամբ զգուշանալի են
անցք քո զմեօք. որովհետև
որք զքեզ 'ի մեծամեծ մեղս,
և 'ի սնոտի դատարկութիւնս
անխնայ վատնեն, մեղմով
անցանես զնոքօք: Իսկ 'ի դը-
ժոխս քան զամենայն առաւել ան-
ողորմ` ի ժամն նոցա դու լինիս. որ

'ի

'ի սիրտս նոցա զայրագին թու_
նօք անդադարման խոցս եդեալ
անդադար տանջես։ Միթէ
որքան թանկագին գնէին զա
տապարտեալքն զկեանս մասն ժա
մու, եթէ հնար լինէր, զի 'ի
նմա լալագին խնդրեսցեն յԱյ
զթողութիւն, զի խոստովանես
ցին զմեղս իւրեանց, զի կա_
մաւոր ճգնութբ սպանցեն
զմարմին իւրեանց։ Յօժարս
կամ սրտիւ յանձն առնուին
տանջիլ 'ի դժոխս ողջոյն յա_
ւիտեան մի, ցը ը անհամար
դարս, եթէ եր յոյս, թէ 'ի
վախճան նոցա հնար է ստա_
նալ զկեանս ժամապաշխարելոյ.
բայց սակայն անհնարին է
այնմ լինել. ոչ 'ի կենցաղում
էր քաջ հնարաւոր. զի ըստ բա
նի հրեշտակին, ոչ եւս կայցէ այլ
ժամանակ։ Իսկ որ անհնարին

կակ_

կսկծեցուցանէ զնա՝ ոչ է տա-
րաբաստ կորուստ ժամանա-
կին, այլ կամաւորական վատ-
նումն այնր մեծագին գանձու
և անյուսութիւնն անդրէն
ստանալոյ զնոյն։ Յայսմ կս-
կծանաց այնչափ աւաւելցին
ցաւք և տանջանք նց̅, մինչև
դիւագին որոտմնութբ̅ կատա-
ղեալ՝ հայհոյեսցեն զա̃ծ, զոր
իբրև զթշնամի ատեն։ անի-
ծանիցեն զդևս, յորոց իբր 'ի
դաւաճանաց զզուին։ չարա-
բանեսցեն զընկերան, որք
պատճառ եղեն մեղանչելոյ։
Նաև գերբան զա̃մ 'ի կատաղի
որոտմնուի ընդդէմ ինքեանց
բորբեալ, զանձինս իւրեանց չա-
րաչար կոծեն. վա՜յ ինձ ասեն,
որ աչօք բայօք դահավէժ 'ի
դժոխս զանձն իմ արարի. վա՜յ
ինձ, որպիսի թանձր յիմա-

թ. բու-

րութ̃ զգածեալ՝ չիմացայ
զնշան իմ մեծ ՚ի վատնելն իմ
չարաչար զայնչափ բազում
ժամանակս՝ յորս կարէի դառ-
նալ ՚ի մեղաց, և պատշաճա-
ւոր ապաշխարութ̃ ազատ
լինիլ յայսպիսի անտանելի
տանջանաց : Ո՛չ ապաքէն ա-
սէին ինձ խոստովանահարքն,
քարոզատուք վարդապետք, և
հոգևոր գրեանք հաստատու-
թ̃ սր̃ հաւատոյ, թէ վախ-
ճանն մեղաց է դատապար-
տութի̃ յաւիտենականն. և թէ
մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս
է, գործեսցուք զբարիս : Իսկ
ես յետին անմիտս, մանաւանդ
թէ անխծեալ անասունս՝ ոչ
կամեցայ լսանալ զայս առ բա-
րին իմ, որ է փրկութ̃ իմ, զոր
նոքա ցուցանէին՝ այլ կամա-
կար մտօք անձամբ անձին

զդատապարտելն իմ ընտրե-
ցի։ Ո՛ անիծս անդամ կոչեայ
զիս Ա͞ծ ներքին ազդեցութե՟.
և յորդոր զիջեալ աղաչէր զիս
հոգևոր դրոյ բանիւք, ձեպէր
զիս խոստմամբք, և ստիպէր
սպառնալեօք դառնալ 'ի մե-
ղաց, բայց ես եղէ խուլ՝ և ոչ
ամոքեցայ անսալ կոչմանն ա͞յ.
Եւ ահա փոխանակ այսպիսի
սուընդամութես 'ի յաւիտե-
նականն տանջանս դատապար
տեցայ. և չկայ ինձ յայսմ՝ հե
տէ ամենևին յոյս փրկութե.
զի ոչ ես տուեալ լինի ինձ ժա
մանակ փոխելոյ զիս 'ի մեղաց
յարդարութի : Վա՜յ ինձ և
եղո՛ւկ, զի թէ և հանդոյն ծո
վու հեղլից արտասուս, ոչ դոյ
ինձ հնար այսմ հասանիլ՝ ո-
րում՝ յառաջագոյն շիթ մի ար
տասուաց հեղլով ունէի հասա
նիլ:

նիլ ։ Ձա՞յ ինձ յայամ հետեւ անկ
հաշուելի մնայ ընդ իս ա̃ծ յա_
ւիտեան , որ յառաջն այնչափ
կարեկից եղեւ ինձ, մինչեւ ելայ
ես 'ի մէր թշնամութեանց իմոյ։
Ցրանեն՞ թէ 'ի վերայ հասանէր
ինձ մահ , որով այսչափ չար_
եաց իմոց լինէր վերջ եւ վախ_
ճան . բայց աստէն մահն ոչ է
այնպիսի , որպիսի էր անդէն
յաշխարհի , որ վախճան առ_
նէր գոլոյ եւ թշնամութե .
այլ աստէն մահն է մշտնջե_
նաւորութի դատապարտու_
թե , որ զմեղաւորն պահէ
միշտ անվախճան . որպէս զի
տանջեսցի 'ի յաւիտեան։ Ա՞յ
Եւսեբիոս եմիս . 'ի մատենի.
Ի . առ միանձ , ասէ թէ . Ազա
նանէ ղատոյեծն , բայց կենդանացու_
ցանէ դատապարտեալսն ։ Նայս յայնմ
հետէ կայ մնայ նոցա եւ ոչ ինչ.

բայց եթէ առ ախտէ ցաւոյն
խածատել և ուտել զլեզուս
իւրեանց ։ Որպէս ասի յայտն .
գլխ . 16 . Ծամէին զլեզուս իւր֊
եանց յախտէ ցաւոցն ։ Ո՜վ ահա֊
ւոր պատուհաս . ո՜վ սոսկա
լի թշուառութիւն ։ Պատմի ,
թէ ՚ի մերձենալ ջրհեղեղին
ումանք ՚ի ծառայիցն ո՛չ գուշա
կէին մեղաւորաց , թէ գալոց
է այն պատուհասն ։ Նաւ որում
զի լինէր Նոյա կատարելա֊
գոյն ՚ի միա աւուր զայս , ՚ի
մարմարիոն վիմի քանդակե֊
ցին զկանխասացութիւն իւր֊
եանց զայս ։ Սակայն և այս֊
ուիկ եւս ոչ զիջան հաւատալ
մինչև եկն ջրհեղեղն և կորոյս
զամենեսեան որք ամբարշտե
ցանն ։ Որպէս ասէ զայս բերու֊
սոս ՚ի գիրք . 1 . առ հօրն պե֊
րէյրամայ՝ յութերորդ մատե
նի ,

նի, 'ի յաւաջաբանութեն․ Հա
մար․ 3․ Նոյնպէս և ես նա-
խագուշակ ազդ արարող լի-
նիմ, թէ նմա որ ոչ դառնայ
'ի մեղաց, հաստանի հեղեղ հրոյ
ոչ ժամանակաւոր, այլ մըշ
տնջենաւոր, միանգամայն և
ամպրոպն տն̃ չարեաց յաւէր
ժական որ հանդերձեալ կայ
վասն տն̃ անդարձ մեղաւո-
րաց ։ Բայց ես զայս ոչ 'ի վէմն
քանդակեմ, այլ 'ի թուղթս
յայսոսիկ ։ Տացէ տր̃, զի ոչ
ոք նոցայն անհաւատալի
վարկցի, այլ հաւատասցի, որ
պէս զի մինչդեռ կայ ժամա-
նակ, յայն յահագին մշտնջե-
նական հրոյն զերծանելոյ ճար
լիցի ։

## Աղօթք առ պահապան հրեշտակն, որ օգնական լինի զերծանիլ՝ ի յաւիտենական դժոխոց ։

Ով, որչափ պարտական եմ՝ շնորհս մատուցանել խնամոց փրկչին իմոյ, վասն զքեզ ինձ դաստիարակ, պահապան և կառավարիչ անձին իմոյ կարգելոյն՝ ի ծննդենէ անտի իմ՝ մէ մինչև ՚ի կատարած կենաց իմոց՝ զհոգեշնորհ իւր զլոյս-մշտապայծառ ։ Իսկ որչափ մեծարանս և հպատակութիւն փրկարար ազդեցութեն քում իրաւ է ինձ մատուցանել ։ Դու ես, որ առանձին խնամով՝ ՚ի սկզբանէ ընդ իս եղեալ յանէտ անքուն ակամէ

մա.

պահեցեր զիս 'ի բազմադիմի վտանգից կենաց, յորում գործս 'ի կայս, և 'ի շարժմունս անձին իմոյ : Դու ես, որ մինչդեռ ես 'ի մեղս անհոգութե թաւալէի, զգուշացար, զի մի իւիք արկածիւ 'ի խմահուանէ ըմբռնեալ, բաժին դժոխոց լինէի յաւիտեան : Դու ես՝ որ զիս 'ի վտանգից յոգնադիմի մեղաց հեռի արարեր, և 'ի յառնել թշնամւոյն ընդէմ իմ 'ի պատերազմ, բազում անգամ սաստեցեր նմա. մեղմացուցեր զթափ նորա, սանձեցեր զյանդգնութին նորա, և առ ոտս իմ խորտակեցեր զզօրութին նորա : Նա բազում անգամ ևս յուշ առնելով զխոստումն իմ այլին, և զսպառնալիսն անվախճանն դժոխոց, և զօր ելից իմոց աստի, 'ի հա

ւա-

ւանութեն մահուչափ մեղաց
զգուշացուցեր: Եւ գլուխ ա̃մք
դու յա̃մ սրտէ ընդ իմ՝ փըր
կութիւն հոգայեալ՝ հսկես հա
նապազ 'ի վե̃ր իմ . և փութաս
խրատել զիս , և յառաջա_
դեմ առնել 'ի գործս բար_
եաց , վա̃ ժառանգակից առնե
լոյ զիս քեզ յանճառ յանպա_
տում փառս երկնից արքայ_
ութեն : Շնորհս ունիմ առ
քեզ վա̃ այսոցիկ ա̃մի : և շնոր
հօք ա̃ն խնդրեմ հաստատեա՝ 'ի
մտի ոչ ևս տատանակիլ յայսմ
հետէ , այլ յա̃մ սրտէ անսալ
յորդորման , ուղղութեն կա_
ռավարութեն և առաջնորդու
թեն քում : Եւ յերեսս անկեալ
աղաչեմ՝ զգթութիւնդ զի 'ի կա
տարումն և յաւարտ ածցես
զսկսեալ բարերարութիւնդ , զեր
ծուցանել զիս յանհերևոյթ
թշնա

թշնամեաց իմոց, որք զցայգ
և զցերեկ դարանակալ լինին
կլանել զանձն իմ, Մրրացո
զիս ոչ պարտիլ ՚ի փորձու-
թեց • զօրացո զիս ընդդէմ
ուրաքանչիւր մեղաց ։ Ոպ զի
ընդ թևօք խնամոց քոց զեր-
ծեալ ՚ի մեղաց, և լցեալ ըզ-
պատուիրանս ոյ, ազատեցայց
՚ի դատապարտութէ դժո-
խոց, և հասից յարքայութին
երկնից, և ընդ քեզ միշտ փա-
ռաբանիչ եղէց ողորմութե
ամենասուրբ երրորդութե յա-
ւիտեանս յաւիտենից •
Ամէն ։



6

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ

## Վեցերորդ.

Վասն աւուրն ուրբաթու:

Յաղագս Յուսահատութեան:

Թուէ դիւրին 'ի վերայ դատապարտելոց բազմապատիկ տանջանք միան_ գամայն:

Մտածեա՛ նախ, զի մարդ կարէ ունել զբազում վիշտս, այլ ոչ զամենն 'ի միասին 'ի նմին ժամանակի, մանաւանդ զի և բազում անգամ մինն 'ի ցաւոց փարատէ զմիւսն, որպ

և

և երբեմն երկու թոյնք գան 'ի
կազմուն 'ի շրջաւէտ գեղոյ միոյ։
բայց 'ի դժոխս պլոզլին հակա
ռակն այսմ լինի. քանզի տան_
ջանքն անդէն ոչ եթէ փարա
տեն զմիմեանս՝ այլ ձեռն տան
միմեանց. և դեւքն են անդ. տ_
նօթք լի բարկութեն նոյ։ Ուստի
որպ̃ 'ի յարքայութեն նոյ ամ̃ ինչ
է նիւթ ուրախութե. սոյնպէս 'ի
դժոխս ամ̃ ինչ լինի նիւթ ցա
ւոց և տրտմութե. որպ̃ զի թշուա
ռութի դատապարտելոցն 'ի
դժոխս՝ եղիցի յամ̃ կողմանց
լցեալ. զոր օրինակ յերկինս
երանութի ընտրելոց լինի յամ̃
կողմանց կատարել։ որպ̃ ասէ
սբ̃ն թովմաս 'ի չրրդ մատենի
յիններորդ բաժանման. խնդ,
2. ապ. 2։ Ասն այսորիկ ամ̃
զամ̃ տանջանս 'ի մի կապ խո_
կեսցէ դն̃լ։ 'ի մի ուսոյց գա_

տապարտելոց այնոցիկ ապս_
տամբեաց, և ապաւեսցէ 'ի նմ
զնմ նետս 'ի կապարճից ար_
դարուն իւրոյ՝ խոցոտել զնմ
յնմ կողմանց՝ մինչև չմնալոյ
մասին միոյ անձանց նց առ_
անց առանձին խոցուածոյ իւ_
րոյ. ոմ ասէ 'ի գիրս 2. օրէն.
32. 23. Ժողովեցից 'ի նս չարիս. և
զնետս իմ սպառեցից 'ի նս: Այլ սոս
կալի ահաւոր ցասման արդար
բարկութեն նյ: Յաւրն իսկ մի_
այն բաւականն էր դնել զնմ 'ի յե_
տին յանտանելի թշուառութեն.
զի այն առաւել ցաւս տայր
նց քան զնմ տանջանս՝ զոր կա_
րասցեն մարդիկ և դևք ան_
դամ հնարել. որոյ վկնեաւ այս
է հնարք նյ: Ո 'ի որպէս ասէ
եսայեայ. 30. 33. (ըստ այլոց
թարգմանութն) Պատրաստեալ է
'ի Տոփաւորէն յոր խոր, և ընդար_
ձակ.

ջահ . ճառագայթ նր̄ հուր և փայլակնայ
բաղդամ հաստատեալ . և սրբամտութե տն̄
ներքին հեղեղ ծծմբոյ , որ բորբոքէ
զայն : Սակայն ըստ արժանեաց
ապերախտութե նոցա յաւե_
լեալ լինելն և այլ բազմադիմին
վիշտք : Քանզի որովհետև
նոքա զամ̄ զգայարանս և զամ̄
զօրութիւնս իւրեանց ՚ի գործ
արկին մեղանչել . վասն այսո
րիկ յամ̄ զգայարանս և յամ̄
զօրութիւնս իւրեանց պատիժս
ընկալեալ՝ տանջեսցին այն_
չափ սաստիկ սրտմտութբ̄ տն̄ ,
մինչև մարգարէին դաւթի
թուիլ անհամար պատիժք :
Ուստի ասէ . Ո՞վ արդ՝ ո՞ գի_
տասցէ զզօրութիւն բարկութեան
քոյ . կամ յահէ ցասման սրտմտու_
թեան քո համարեսցէ : Սաղմոսի .
89 . 11 : Որդ՝ զտանջանաց
զգայարանաց փոքր ՚ի շատէ մե_

բա_

բագոյն Ձայնեցաք · իսկ զգօ_
րութեանց Հոգւոյ այժմ մտակա_
ւոր խօսեսցուք ։ Եւ արդ ներ
քին զօրութիւք Հոգւոյ դա_
տապարտելոց որչափ առաւել
են կատարեալք, այնչափ ա_
ռաւել ընդունակ ցաւոց գըտ
եալք՝ առաւել չարչարես_
ցին ։ Քանզի երեւակայական
մտան նոցա միշտ տանջեսցի
զարհուրատեսակ ցնորիւք եր
եւութից ։ Եւ դու տես, զի
յաստի կեանս ով ոք է լցէ,
եթէ զիւրն ինչ զտրտմութիւն
ունիցի, զցայգ եւ զցերեկ զտրտ
մական տեսակին, որք տրտ
մեցուցանեն, 'ի մտածողա_
կան զօրութէ իւրում տպաւո
րեալ՝ միշտ պահէ ։ Ապա
զի՞նչ լինիցի 'ի մտածութէ
ամ չարեաց՝ յորժամ դատա_
պարտեալն 'ի դժոխս տեսա_

նէ 'ի մէջ իւր զերկինս փակեալ.
'ի ներքոյ իւր հուր անշէջ.
շուրջ զիւրև դևք դժնդակք.
և 'ի ներքս իւր վիշտք ցաւոց
անփարատելի ։ Իսկ զգայա-
կան ախորժակք նոցին իբրև
'ի ծփմանս փրփրացեալ անսաստ
ալեաց՝ խռովեալ տատանեալ
տագնապեալ յա̃մ հարուա-
ծոյ ա̃ծային դատաստանին
յանհնարինս կատաղեսցին.
և ոչ 'ի մէջն մի հարուածոյ վրի
պիլ կարասցեն ։ Իսկ արդ՝ ե-
թէ կաթիլ մի ջրոյ յարաժամ
անկեալ 'ի վերայ քարի միոյ՝
մաշէ զայն. ապա զի՞նչ արաս
ցէ 'ի վերայ թշուառացեալ
սրտից դատապարտելոց հե-
ղեղն ա̃մ չարեաց իջեալ 'ի
վրէժխնդրութի̃ անարգանացն
արարչին ա̃մի ։ Սաստի ասի յո-
բայ. 20. 23. Արտաքսեսցէ 'ի նմ̃

Նորա պարզամտութիւն ճաշակութիւն. արկցէ ընտրեալ ցանս: Ահա միտք նոցա լցեալ լինէին սոսկալի ներքին խաւարաւ՝ յաւէտ քան զխաւարն նոցա, որ լցեալ արտաքին խաւարաւ, սաստիկ տանջեսցին: Եւ որչափ ինչ դիտէին, յայնց ամէ ոչինչ յիշեսցեն երբեք, բայց եթէ զայնոսիկ և եթ, որք նոցա ցաւս հասուցանեն: Աստի ասէ Ժողովողն. Գ. 10.

Ո՛չ գիտութիւն, և իմաստութիւն իցէ 'ի դժոխս:

Պատմի, թէ միում յանուանի վարդապետաց անտի լուսաւորից, զոր է Փարէզ քաղաքի, որ դատապարտեալն էր 'ի դժոխս, երևեցաւ եղիս կողոսին նոր. և 'ի պատմելն նոր զիւր թշուառութիւն, ասաց, թէ 'ի դժոխս զայլ ինչ ոչ գիտեմ, բայց զայս միայն, զի դատապարտեալ եմ, և զի ոչ

 եր-

երբէք զբարի ինչ ընդունե_
լոց եմ: Կամքն իմ 'ի չարութե
խոտացեալ, ոչ երբէք ունե_
լոց է զշարժ ինչ դէպ 'ի հա_
մեստն, և 'ի գործս բարիս,
այլ մանաւանդ յառաջին չա_
րակամութիւն իւրեանց պըն_
դելոց են. և որչափ առաւել
ճնշեալ յիմյ 'ի վայր ընկճին,
այնչափ առաւել 'ի վերյարու_
ցեալ ընդդէմ նմա ատելութե
և հպարտութե յաւէտ հաս_
տատեն զիւրեանց չարութին:
Ըստ սմին Բեռնարդոս 'ի
հինգերորդ մատենի յաղագս
խոկմանն. գլ. 22. ասէ. "Օ՜ ինչ
մեծ վիշտ քան զչարաչարն մեծ չարոյն որ
ոչ երբէք եղիցի. և մեծ չարաչար չարոյն
որ ոչ երբէք ոչ եղիցի: Տենչան
միշտ ունիլ զհանգիստ, կամ
առնուլ զվրէժ, և ոչ երբէք
կարեն տենչման իւրեանց հա

սա_

տանել : Ունեն միշտ զդատաս-
տանն , և զպատիժն . և ոչ
երբէք կարասցեն 'ի տանջա-
նաց իւրեանց ազատիլ : Սա-
տի նոյն սուրբն 'ի նմին տեղ-
ւոջ յաւելու ասել . 'Ի յաւիտ-
եան ոչ ընկալցի զոր կամի . եւ զոր ոչ
կամի , 'ի յաւիտեան ունիցի : Բայց
արդ՝ եթէ թշուառ ակամն դա-
տապարտեալն կարէր խոնար-
հիլ ընդ հզօր ձեռամբն այ , և
համբերել զայն նորա՝ որ ար-
դարութ. հարուածէ զնա , յի-
րաւի մեղմացուցանէր զցաւս
իւր . Այլ մեղմացուցանեն ըզ-
ցաւս իւրեանց այսպիսի խո-
նարհութ. սբ. հոգիքն , որք 'ի
քաւարանի անդ փակեա՛լ տան-
ջին : Բայց զայս առնել ո՛չ ի-
մաստաւորէ անզգամդ դա-
տապարտեալն, այլ միշտ առաւել
զայրագնի , և ո՛չ զատան

գործ 'ի ներքոյ հարուածոյն
ա̃յ թունոյն իւրով զկատա-
ղին իւր կրկնապատկէ ։ միշտ
ընդդէմ դառնայ ընդհարկա-
նիլ 'ի վճիռն ա̃ծային, և ան-
դէն դատափետ եղանէ յար-
դարութե̃ն նորա, որովհետև
ցանկայ զերծանիլ 'ի պատ-
ժոյն՝ առանց զարշելոյ և յետս
դառնալոյ 'ի մեղաց ։ Եւ քան
զի ա̃մ կիրք նորա անսանձ և
արձակք են, ուստի միահա-
մուռ միաւորեալ ընդ հոգւոյն
դրոհ տան 'ի ցանկութի̃ ա-
գահութե̃, կամ վրէժառու-
թե̃, և այլոց ախորժակաց,
բայց նոյնժամայն յետս ընկր
կեալ՝ 'ի բաց դառնան սաստիկ
ցաւովք սրտի. Վան զի բաց
սրբոյն Բեռնարդոսի, ոչ եր-
բէք ուղիղն՝ և թիւրն միա-
բանին, ո̃ղ 'ի վերոյ յիշատա-
կե-

կեցաք ։ Նու արդ՝ տես զու-
յայսմ վայրի, թէ որպիսի յու-
սահատութիւն ըմբռնեցոյց ըզ-
թշուառականսն զայնոսիկ վն
յաւիտեանս յաւիտենից մեր-
ժելոյ ա̅մ բաղձանաց իւրեանց,
յորժամ տեսցեն, թէ 'ի յա̅մ
յաւիտեանս յետ այնչափ չար-
չարանացն նոցա և ոչ զկաթիլ-
մի ջրոյ հանձեսցի ա̅ծ տալ նո-
ցա 'ի զովացումն ։ Նու ահա այս
է կատարածն յոր ածէ զմարդ-
մնոտի յոյսն և խակական յան-
դգնութին մեղաւորաց, 'ի
գործել զչարիս, և ակնունիլ
բարեաց, խապան յամառնիլ
'ի մեղս, և յուսալ ընդունիլ
փոխարէն զփրկութին ։ ընդ-
դէմ բանին սիրաքայ, որ ա-
սէ ։ Որդեակ, մի՛ սերմաներ 'ի վերա-
յակօսս անիրաւութե, և մի՛ հնձեսցես
զնոսա եօթնպատիկ ։ սիր ։ 7 ։ 3 ։

Այս է խրատ, զոր տամ քեզ ողորմութեին ա̄ծային, և աստ· մի սերմաներ զմեղս, զի մի ժողովեսցես քեզ բազմապատիկ զտանջանս ։ Եւ արդ գիտասջի՛ր խրատովս այսուիկ շահանել անձին քում · ապա թէ ոչ այն յոյսն, որ ձգէ զքեզ 'ի բազմապատկել զանօրէնութի, ածէ զքեզ 'ի յաւիտենականին յուսահատութի ։

Ահա այս տ̄ն տանջանք են յոյժ սաստիկ ։

Մտածեա՛ երկրորդ, թէ թշուառական մեծատունն իրաւամբք կոչեաց զգժոխսն տեղի տանջանաց, երբ յաղաչէին իւրում զաբրահամ փոխն եղ

բարց

բարց՝ ասաց զի մի եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց: ղուկ. 15. 28: Իսկ պատճառն է, զի այն է միջակէտն ամ՝ չարեաց: Նա֊ պա զոր օրինակ իրքն երբ կան 'ի միջակէտն իւրեանց, են ա֊ ռաւել զօրաւոր. եւ են անդ֊ ամկատարելութե եւ գերա֊ կայութե, քան թէ յորժամ լինին յայլ ուրեք, սոյնպէս չարիքն, որ է, չարչարանքն 'ի դժոխս ոչ միայն են բազումք, եւ իբր անթիւք, այլեւ անհա֊ մեմատ սաստիկք, եւ զուտք: Նախ՝ զի տանջանքն անդէն չունին զներհակ ինչ՝ որով մեղմասցին, այլ են բոլորովին տանջանք առանց մխիթարու թե: Մի եւ յերկինս ուրախու թիւքն լինին պարզ ուրախու֊ թի առանց տրտմութե: Եր կրորդ, զի 'ի դժոխս բարիքն

ևս փոխարկին ՚ի չարիս . զոր
օրինակ , ընկերակցութիւն ,
որ յայլ ուրեք է մխիթարու-
թի տառապելոց , ՚ի զժոխս
լինի ծանրութի տանջանաց
յոյժ յոյժ ։ Լոյսն, որ յայլ ու-
րեք է գեղեցիկ ըղձալի , ՚ի
զժոխսքան զխաւարն է առա-
ւել ատելի ։ Գիտուն լինիլն ,
որ յայլ ուրեք յոյժ ուրախ առ-
նէ, անդէն քան զտգիտութիւն
առաւել չարչարէ ։ Եւ արդ-
զինչ ես ։ Մահն՝ որ յետ ամենին է
ամ՟ահաւոր կրից , լինի ծայ-
րագոյն ամ՟ փափաքելեաց ։
Աստի կեանս ցաւքն կամ ոչ
լինին երկար . և կամ ոչ մեծա
մեծք . վասն զի կամ բնութին
սովորութ՟բ տոկալոյ ունակա
ցեալ՝ յաղթէ նոցա . և կամ
ակարացեալ անկանի ՚ի ներ-
քոյ ծանրութէ նոցա , և չի-

Ջա-

ջանի : Ուստի ասէ սենեքա 'ի յեօթանասուն և ութերորդ թուղթն . Կարճատև ցաւն չէնն յերկրայ ատուէ ամենէ . չէ կամ չէջանէ, և կամ չէջրացանէ : Իսկ 'ի դժոխս գլխովին ներհակ այսմ կանոնիք են, վ՟ զի ցաւքն անդէն լինին և մնան միշտ նոյնպէս անտանելիք ըստ սաստկութե՟ . և անվերջք յա՟ տևողութե՟ : զի կրեն ոչ թե թևանայ ժամանակաւ , և կրօղքն ոչ մաշին ժամանակաւ : Վասն որոյ ասի , 'ի դժոխս չիք ինչ փրկութի՟ : Ոի որպէս անդ չիք մեղմութի՟, նոյնպէս և չիք հանգիստ, որք միշտ զօրանան 'ի կենդանութե՟ , զի միշտ այրեսցին և սգայցեն, և լայցեն : Ուստի ասի յուդիթայ . 16. 21. Տացէ հուր և զորդունս 'ի մարմինս

նո

նոցա, և չարչարեն նոքա 'ի սպման մինչև
յաւիտեանս ։ Քանզի զայս պա_
հանդէս ածայինն մեծ վայելչու_
թեան արհամարհեալ 'ի մեղա
ւորաց, զայն զայս խնդրել ա_
րիւնն յիւրոյ առ ոտն հարեալ
'ի նոցանէ, և արքայութիւնն
երկնից խոստացեալ, որ 'ի մե_
ղաւորէ փութ՚ միում յե_
տադարձեալ անարգի ։ Աստն_
ոյոյ ածային արդարութեան,
որ խնամակալն է ածայինն պա
տուոյն, փառի ընդդէմ մեղա
ւորաց տուժել 'ի նոցանէ զած_
այինն պատիւն զոր բարձին մե_
ղաւորքն 'ի նորին մեծ վայել_
չութենէ ։ և տալ զինքն ճանա_
չել այնպիսին՝ որպիսին է ։ Որ_
պէս ասի 'ի սաղմոսի ․ 9 ․ 17 ․
Ճանաչի տէր առնել դատաստանս
իւր ։ Եւ յոբայ ․ 21 ․ 19 ․ Հա_
տուսցէ նոցա՝ և ծանիցէ ։ Եւ

այն_

այնպէս թշուառականքն այնո
քիկ որք զարժանն իւյ ձմնա-
չել սուտնգանեյին , 'ի սաստ
կութէ հարուածոյն , որք զե-
ղեալ յաձախեն 'ի վե̃ր նոցա ,
ծանրուցեն զնա , և իբրև զգա-
լի ինչ տեսցեն 'ի վերան , զորս
առնէ յոգիս նոցա ։ Յայսմ
վայրի ունիս իմանալ, զի եթէ
ցաւն մէն միոյ դատապարտե-
ցելոյ բաժանիւր 'ի վերայ ա̃մ
մարդկան ընդհանուր աշխար
հիս , այն մասն , զոր մի միայն
մարդ ընդունէր , առաւել
տանջէր զայն մարդն, քանթէ
ունէր զա̃մ տանջանս՝ զոր կրե
ցին և կրելոց են ա̃մ մարդիկ
աշխարհիս ։ Իսկ զի այս ճշմար
տիւ այսպէս է , 'ի միտ առ ,
թէ յորպիսի յուսահատութի
ընկղմնելոց է զնա , որ գտցէ
զինքն 'ի սակս մեղաց իւրոց

յայն-

յայնպիսի ցաւս տանջեաց միշտ
թաղել կենդանւոյն : Ոմուա-
ած, թէ եթէ դեռ լինիցի մե-
ծագդի և բարեկեցիկ իշխանի
ումեմն 'ի պատճառս ցոփակե-
ցուն իւրոյ` ախտամեալ զախտ
միզարգելութ, որ չհանդուր-
ժեալ փոքր մի ցաւոց խթին,
որ վայէ և ճիչէ . որ շրջշրջի
իբրև սողուն յանկողնի, որ-
պէս անիծանէ զբախտ իւր,
որպէս զզուի յամ դրդանաց
մարմնոյ, մինչև ձանձրանալ
և 'ի կենաց. Այն իշխանն, որ
զետեղեալ կայ 'ի բարեջերմ
սենեկի, ընկողմնի 'ի փետրա-
լից անկողնի, 'ի բարեկամաց
բազում սփոփանս ընդունի,
'ի բժշկաց բազում` քաջալերս
առնու, 'ի դեղորէից յոլով
դիւրութիւն առանայ, 'ի միկ-
նոջէ իւրմէ զսպասաւն և զսէր
տեսա

անսամնէ, և բովանդակ տուն նր̃
զցայգ և զցերեկ նմ̃ 'ի խալասսու-
կայ՝ առ 'ի հանդուցանել զնա
'ի ցաւոց իւրոց ։ Եւ նա յանձն
իւր ոչինչ ցաւս ունի ․ բայց
միայն 'ի փոքրիկ մասին մ̃ոյ
դոյզն ինչ կսկիծ ։ Ապա զի՞նչ
լինիցի՝ յորժամ սոյն սա դատա-
պարտեալ՝ թաղեսցի 'ի ծծմբա-
խառն հրալիր խորխորատն դը-
ժոխոց ․ և յամ̃ մասնէ բարւոյ
և 'ի մխիթարութէ զրկեալ՝ կրես-
ցէ զանտանելի ժահահոտու̃ի
և զծայրագոյն ցաւս ․ ո՛չ եթէ
'ի մէն մի մասն մարմնոյ իւրոյ,
այլ ը̃ն բոլոր մարմին, և հոգի
իւր ․ և ո՛չ եթէ զմի միայն սեռ
ցաւոյ՝ այլ զամ̃ սեռս ։ Ըստ սոսի
ասի յոբյ ․ 20 ․ 22 ։ ամ̃ տագնապ
հասցէ 'ի վերայ նր̃ ։ և երանի թէ
միայն ցաւք անձին նորա լի-
նէին ․ քանզի թշուառականն

այն

այն բաց 'ի նեպհական ցաւոց, կրեսցէ զանտանելի տառապանս 'ի յանխծանաց, և 'ի նզովմանց ժամանաժուտ ընկերաց, 'ի նախատանաց, և 'ի կատականաց անարգողոյն դեւաց, 'ի վայոց և 'ի դուժմանց անմխիթար, անհանգիստ, և անյոյս դատապարտելոց, որք այնչափ նեղեսցեն և լլկեսցեն զնա սոքիմբք, մինչև յամ վայրկենի ստիպեսցի բիւրակերպ սատակմամբ կոտամահ լինիլ: Որդ՝ ահա մերկացի քեզ զդժնդակութի պատուհասին դատապարտելոց, և թէ դու լուեալ զայնչափ ապացոյս արժանահաւատս, դեռ ոչ հաւատաս, 'ի ծայրա գոյնն ես հասեալ 'ի խելագարութի. իսկ թէ հաւատաս, ապա ընդէ՞ր մոլեգնիս զանպատ-

պատմելի մոլեգնութե՛ն , զի
կեաս համապաղ 'ի մեղս , և
յանօրէնութե՛ս , քանզի այ_
դու կենօք այնչափ 'ի բացեայ
ես 'ի տարտարոսէն դժոխոց ,
որչափ հեռի է շաղխղնէ խեալ
'ի գերեզմանէ խոր գբոյ Լու_
կարի յիրաւունս , զի որպէս
նեխեալ մարմինն ընկեցեալ
դնի 'ի գերեզմանի , նոյնպէս
և մարդ մեղաւոր 'ի տարտա_
րոսն գեհենի : Ճշմարտի՟
զարմանք մեծ են , զի անօրէ_
նութի՛ք մեր սախպեացեն զա՟ծ
'ի հաստատել զանհնարին
տանջանաքանս դժոխոց , որ
հարկէ զմեզ անտալ խուրեան ,
և սիրով երկնչիլ 'ի նմանէ :
Բայց տառաւել սքանչելի է , զի
զկնի հաստատելոյ զայն տե_
ղի տանջանաց, դեռ տակաւին
ոչ լսեմք ձայնի նորա . և ոչ
ակնածեմք 'ի նմանէ :

Թէ այս ամ տանջանք առաւել
սաստիկ լինին ՚ի մտածելն դա_
տապարտելոյն զկորուստ
արքայութեն։

Մտածեա՛ երրորդ, թէ յե_
տին լուծմն յուսահատութե
դատապարտելոյն լինի ՚ի փա
ռայն ընտրելոյն արքայու_
թեն երկնից։ Որ այս յայտ է
այնու՝ որ ՚ի ղուկաս․ 16․23․
պատմի զմեծատանէն, թէ ՚ի
դժոխս ամբարձ զաչսն իւր՝ մինչ ՚ի
տանջանսն էր, եւ ետես զաբրահամ ՚ի
հեռաստանէ, եւ զղազարոս ՚ի գոգ
նորա հանգուցեալ։ Այս տեսու_
թիւն զժնդակ իմն՝ շուրջ հա_
կակայական գործողութ
սաստկացուցանէ զտանջանս
թշու_

թշուառականացն , որք միով
օրինակաւ զիւրեանց զյետին
թշուառութիւն , և զայլոց ըղ
ծայրագոյն երանութիւն ա
ռեն : Քանզի թէպէտ ոչ
տեսին, և ոչ երբէք տեսանեն
զա̃ծ · սակայն 'ի պատիժ
տուգանութեան նոցա տալա
ւորի 'ի միտս նոցա սաստիկ
ճանաչումն ինչ մեծի բարւոյն
որ է վայելումն երանութեան
միշտ և յաւէտ : Եւ սոյն ճա
նաչումն առաւել պայծառա
նայ յաւուրն դատաստանին՝
յորժամ՝ տեսցեն զփառաւո
րեալ մարդկութիւն յի̃ս.ք̃ի 'ի
զարհուրանս անձանց իւր
եանց · և նոքա իբրև գործով
ա̃յ՝ քան զա̃մ զգերագունին՝ հա
մանգամայն իմասցին զա̃ծայ
ին մեծ վայելչութիւն , և ըղ
ձեն այսմ՝ զերանութիւն, 'ի յոր

ըն

ընտրեալքն այ վայելեն 'ի յա-
ւիտեան : Այլ ասէ սրբն Թով-
մաս յութերորդ գիրս պի-
տառնութեն . խնդիր . 7 . հմ .
17 . Նախանձ սաստիկ կիզես
ցէ զնոսա 'ի տեսանելն իւր-
եանց զարդարեան յայտնի
փառս և յուրախութիւն . և
այս եղիցի 'ի սիրտս նց իբրև
երկրորդ դժոխք . ոպ ասի եր
գոյ . 8 . 6 . Խիստ է իբրև դժոխք
նախանձ . որով հետև զնմ՝ բա-
րին ոքց տանջանս առնել մե-
ղաւորաց . վնյ կատարի իմն
տենչմամբ ցանկան ունել զնն
ընկերս յիւրեանց տանջանս :
Որպէս քեզ՝ յօրինակ սոյա
զհրէայսն , որք 'ի տեսանելն
իւրեանց զորքն ստեփաննոս
գերազանցեալ 'ի մխիթարանու-
թին , պայթուցանէր զնն նա-
խանձն իւրեանց : Աստի ասի

գործ. 7. 54. Թէ Օայրանայէն 'ի
սրտից ճաքճանց եւ կրճտելէն ատա-
մանց 'ի վե̃ր ն̃ր: Արով ունէիս իմա-
նալ՝ թէ որչափ սաստիկ լինի-
ցի կատաղի նախանձ նզովե-
լոցն այնոցիկ 'ի յիշելն իւրենց
զանպատմելի պատիւն եւ յաղ-
թանակն ընտրելոց: արդ՝ եթէ
չէր այս խանդոյն տանջինք՝ ո՛չ
այնչափ յաձնէր ա̃ծյին գիրն
յուշ առնել մեզ տանջպ ի̃ ըւե
ռելոյ զմեզ յերկիւղն փրկա-
կէտ: Այն յովհաննէս 'ի յայտ-
նութե իւրում ասէ յիգս դատա-
պարտելոյն՝ թէ Տանջեսցին հրով
եւ ծծմբով առաջի հրեշտակաց սրբոց՝ եւ
գառինն. յայտ. 14. 10. (ըստ այլ
թրգմ:) Նաեւ ս̃բն պօղոս ասացէ
զբանն՝ թէ Որք ոչ հնազանդեցին աւե-
տարանին տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի՝ տայցեն վրէժս
'ի սատակման յաւիտենից յերեսաց տ̃ն
եւ 'ի փառաց զօրութե̃ ն̃ր՝ յորժամ գայցէ

գա-

ծառայաւոր լինել 'ի մէջ մեր եղբարց: 2.
Թես. 1: Եւ ճշմարտի այս կր-
կին իրօք՝ յորժամ սէրքն տեսցեն
զտանջանս դատապարտելոյն իբ-
րև է հայելի յա̄ծութե̄ն. և դա-
տապարտեալքն ճանաչեսցեն 'ի
թշուառութե իւրեանց զփառս
սրբցն. ո՛րպ հրճանդ որք ճանաչէ
զբարին առողջութե 'ի խօթութե
երրորդ, զոր կրէ: և զայս յայտ
առնէ ա̄ծ 'ի ձեռն եսայեայ՝ ա
սելով. Արարէք չար առաջի իմ. և
զոր ոչն կամէի, ընտրեցէք: Վ̄ն ահաւա
սիկ որք ծառայեն ինձ՝ կերիցեն. և
դուք քաղցիջիք: ահաւասիկ որք ծա
ռայեն ինձ՝ արբիցեն. և դուք ծարա
ւեսջիք: ահաւասիկ որք ծառայեն ինձ
ուրախ լիցին. և դուք ամաչեսջիք:
ահաւասիկ որք ծառայեն ինձ՝ ցըն-
ծասցեն ուրախութե̄ սրտից. և դուք
աղաղակեսջիք վասն ցաւոց սրտից ձերոց. և
առ բեկմանէ հոգւոց ձերոց ողբասջիք:

ժա   զը

գլ. 65. Նաւ մանաւանդ առա_
ւելու. ըցաւս սրտիցն մեր այս, զի
ոչ միայն ծանիցեն, թէ յոր_
ժամ հինքեանք տանջին, ար_
դարքն 'ի յարքայութեն յան_
ցաւի փափկութիս 'ի փառս եւ
'ի ցնծութիս մեր վայելեալ քեր
կրին, այլ եւ ծանիցեն, թէ ած
ընդ արդարոցն խնդայ 'ի մի
տանջանաց իւրեանց. մա զի
այնու տանջանօք փառաւորի
ածային իրաւունքն եւ արդա_
րութիւն ։ Նայս է արդարեւ
սրտառայր սուրն, որ սաստիկ
խոցոտէ զսիրտս դատապար_
տելոցն ։ զի կրեն զայնչափ
վիշտս եւ զտանջանս ոչ միայն
առաջի աչաց դատաւորին իւ_
րեանց, այլեւ առաջի աչաց ար_
դարոցն 'ի խնդութի եւ 'ի փառս
եւ յերջանկութի նց, զորս ա_
տեն յամ զօրութէ իւրեանց ։

Եւ սովին այսուհիկ առ հարկէ
լինելին իբրև զզոհ մշտամնա-
տոյց ողջակիզի, ծախեալ ան
ծախսապէս առ 'ի պատուի բարձ
րելոյն ։ Եւ արդ՝ եթէ այս
այսպէս է, հարկին դու ընթեր
ցօղ գրոյս խնդրեսցես առ դա-
տապարտիլ իմում ը̄ տան-
ջանս իմ . իսկ ես յաւէժ նա-
խանձաւէկ մաշեցայց 'ի փր-
կիլ քում ը̄ ուրախութի քո ։
Եւ սովին ընդդէմ, եթէ ես
փրկեցայց, և դու կորնչիցիս,
ցնծալից բերկրեցայց ը̄ աղէտ
թշուառութե քոյ . իբրև ը̄
բարիս տն̄ ոյ, որ հանէ զվրէժ
քինուն ը̄ անարգուս անուան
իւրոյ . ուստի առաւելից . 1 . 26 .
Այլ յառաջ հետև ես ծեծալեցայց ըղ-
կարապետանք յերրոդ ։ Եւ սղմսի .
57 . 11 . Ուրախ եղիցի արդարն, յոր
ժամ տեսցէ զվրէժխնդրութի, և զձեռս
իւր

ևար լռեալք յարեան մեղաւորէ . և զո
ռեալք ամ ծարք, թէ արդարև գոյէ
գործոց արդարոց, և է ամ, որ դա_
տէ զնա յերկիրէ : Իսկ արդ՝ դու_
տես, թէ որպիսի դառն յու_
սահատութի կտակ զդատա_
պարտեալսն՝ յորժամ տեսա_
նեն, զի յայնչափ տանջանսն
իւրեանց ոչ միայն զմեղմութի
և զթեթևութի ինչ ցաւոց ոչ
ընդունին, այլ և նոյն տանջա
նօքն իւրեանց զերջանկութին
ատելեաց իւրեանց յաւելուն :
Սի՛ պատուհասի ահագնու_
թե : Պատմի, թէ ուրացօղն
քն յուլիանոս յորժամ խոցեալ
եղև յանհերևոյթ ձեռանէ, ե_
առ յարենէ իւրմէ լի ափովն և
արձակեաց յերկինս ասելով :
Յաղթեցեր նազովրեցի, զի
յաղթեցեր : Արդ՝ եթէ յու_
լիանոս ուրացօղն չև ևս իջու_

 ցեալ

ցեալ 'ի դժոխս՝ այսպիսի դժ-
նեայ յուսահատութե̃ զան-
հնարին հայհոյութիւն ժայթ-
քեաց. ապա զո՛րպիսի ատելու-
թիւն, և զո՛րչափ հայհոյութիւն,
և անիծաբանութիւն 'ի դառն
յուսահատութենէ իւրեանց
ժայթքեսցեն դատապարտ-
եալքն 'ի դժոխս ընդդէմ ա̃յ,
և ս̃րց ն̃ր. որք ոչ միայն խոցեն
զնոսա, այլև ցնծան և զուար
ճանան 'ի վ̃ր տանջանաց ն̃ց
վ̃ս փառաց արդարութե̃ն ա̃յ:
Ո՛վ դու 'ի միտ առցես աստ
զևս սոսկալին. զի եթէ ընդ-
հարիւր ամ̃ մի միայն 'ի մարդ-
կանս միջոյ դատապարտիւր
'ի դժոխս, պարտէր ա̃մ որ
սարսիլ և դողալ, բայց վա՜յ
թանձր կուրութե̃ մարդկայ-
նոց ազգի, և վա՜յ մեծի անհո-
գութեան մերում, որ թէպէտ
և

և գիտեմք · զի օր ըստ օրէ
բիւրաւորք դատապարտեալ ի
նոյն սոսկալի յանել տարտա_
րոսն անկանին, քս տն · որ ա_
սէ : ընդարձակ է դուռն և համար_
ձակ ճանապարհն · որ տանի ի կո_
րուստ, և բազումք են · որք մտանեն
ընդ նա : Մատթ · 7 · 13 · Սակայն
և այնպէս ոչ հոգամք · այլ ան
կասկած համապարզորդեմք ի
մեղս, և սուղիմք ընթանամք
համապատ զայն ճանապարհն,
որոյ ելքն աւարտին ի չարաշ_
ալէծ կորուստ գերոյն անդնդոց:
Ո՞վ հայր աւաղական · ընդէ՞ր
ծնար հրէշ կորստական : Ո՞վ
մայր չարաւական, է՞ր սնու_
ցեր զվիժածս անիծական ·
Ո՞վ ամուսնութի բամբասա_
կան, որով ծնաւ զաւակ՝ այ
թշնամական : Ո՛վ յղութե գեր
քան զամբարշտական, զա_

ւակ անիծից ծնունդ եղկա-կան, որ յանկաս նախ կրել զտանջանս յաւիտենական. և ապա հաւատալ զկսկութիւն ապացուցական. 'ի դէպ է-կեալ վայյոց եւանբեայ եմէսայ ւոյն, որ ասէ, 1. Ճառ. աա. մի անձ: Վա՜յ, որ խնդրէ նախ հրե-ղայնոյն, քան հատուցանել:

Աղօթք առ Տէր Բարեխօս սրբոյն, որ-պէս զի Տէր ընծայեսցէ 'ի մեզ շնորհս երկիւղութեան:

Ո՜վ ո՜րպէս զի մեծ են փառքն և խնդութիւն, զոր 'ի վարձ ծառայութեան, համբերութեան, սիրոյ և հնազանդութեան պար-գեւեաց ձեզ Հայրն փառաց՝ ընտրեալքդ 'ի նմանէ յառաջ

քան

քան զլինելն Թի , սէրդ ( այս
անուն ) և ներդ ( այս անուն )
Նու զիա՞րդ հնարեցայց ես
մարդկեղէն բարբառոյ նշա-
նակաւ զիմն 'ի նշուլից գերա-
փին լուսոյ փառացդ՝ յոր վայ
ելէք , 'ի յիշատակ ածել : Ո-
րովհետև այդ է այն , զոր ակն
ոչ ետես . և ունկն ոչ լուաւ .
և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ ,
ըստ մարգարէին գրոյ : Այլ
սակայն անկեալ առաջի մեծ
վայելչութեան փառաց փրկչին
մերոյ , գոհանամ զնմանէ վ̄
ձեր , օրհնեմ զանուն նր̄ , և
փառաւորեմ , որ անբաւ առա-
տութը̄ ժամանեցոյց զձեզ
յօրհնութի՛ քաղցրութե՛ իւ-
րոյ . և փառօք և պատուովք
պսակեաց զձեզ : Նու արդ՝ ա-
հաւասիկ դուք առաջնորդու-
թը̄ նո̄ն 'ի նաւահանգիստն
երա

երանութե հասանեալ, աններկե-
ան էք 'ի դժմին, իսկ ես ծառայս
ձեր դեռևս 'ի ծովածուփ
կենցաղս յայս թշուառութե
բազում վտանգօք կործանման
տագնապիմ, որ̅ և դուք ձե-
րին բազում անգամ տեսիք
զկամինկար նաւաբեկութին
իմ պէսպէս մեղօք : Եւ ուր
լինէի ես այժմ եթէ ձեռն
բարերար ա̅ծն իմոյ ոչ վեր առ-
եալ էր զիս յապաշխարութի,
և դուք բարեխօսութե ձերով
չէիք ինձ զժամանակապաշ-
խարութե 'ի նմանէ ընկալ-
եալ : Սարսիմ 'ի խորհրդին իմ
զայս, վ̅ զի յայնժամ 'ի պատ-
րաստ էր դժոխքն՝ յանդունդն
դըն ա̅մ թշուառութեց իւր
ոց ընկղմել զիս : Աստի յե-
րեսս անկեալ աղաչեմ զձեր
գթութին բարեխօս լինիլ
առ

ու հայրն ողորմութեց շնոր_
հել ինձ զկատարեալ թողու_
թի մեղաց. և առատաձեռ_
նել ինձ շնորհս հաստատուն
մնալոյ 'ի բարի յառաջադրու_
թե իմում, չդառնալ անդրէն
'ի մեղս, յորոց զզջացեալ`
խոստովանութ և ապաշխա
րութ հեռացայ: Այլ ես այ
սուհետև յուսով ընտրեմ զձեզ
այսօր 'ի վկայս խաղաղութեն.
զոր կամիմ հաստատուն պա_
հել ընդ իմում յաւիտեան,
զվկայութի եդեալ առաջի ձեր
թէ կատարեալ ատելութ
ատեմ զանհնարին ապերախ_
տութիս իմ, և զդիւաշունչ
լրբութիս, որով զնա դառնա
ցուցի: Այլ զհաստատութի
յառաջադրութես այսմ յայտ
առնեմ, թէ ընտրեմ մահա_
ւանդ յոչինչ դառնալ. քան մի

սան_

սանգամ զայնպիսի մեծ անի-
րաւութիւն առնել տն իմում:
Նաև դուք, որք վկայք եղէք
այժմուս ընտրութե իմոյ, բա-
րեխօս լերուք վն իմ առնա. և
ընկալարուք ինձ զզօրութի
ըստ օրինակի ձերում յաղթա
հարել զթշնամիս իմ գն, ըդ-
մարմին, և զսատանայ. և յաղ-
թանակեալ 'ի վր սոցա շնոր-
հօք տն փառաւորեցից զնա
ընդ ձեզ յարքայութն երկ-
նից. Ամէն:





7

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ

## Եօթներորդ՝

Ի Է՛ աւուր շաբաթին:

### Յաղագս յաւիտենականութեան տանջանաց:

Թէ յաւիտենականութիւն դժոխոց է անվերջ:

Մտածեա՛ նախ. զի՛ պատիժքն դժոխոց թէ և լինէին թեթև ինչ միշտ, սակայն մի՛ անվերջ և անվախճան տևողութեամբ էին անբաւ-

և անտանելի տանջանք. ապա
ո՞րչափ ևս անտանելի են այս_
ու՞իկ, զի խիստ դժնդակք են.
և միանգամայն անվերջ և ան
վախձան: Բայց ո՛վ քաւական
լինի իմանալ՝ թէ զո՛րչափ ծան
րութի յաւելու 'ի վե՞ր ցաւոյն
անվախձանութին տանջանաց:
Բայց զայս փոքր 'ի շատէ ու_
նիմք իմանալ, եթէ զմտաւ
ածցուք այսպէս, թէ տան_
ջանք միոյ ժամու է մեծ ցաւ.
ապա տանջանքն երկուց ժա_
մուց է կրկնապատիկ մեծ. իսկ
հարիւր ժամուցն է հարիւրա
պատիկ մեծ: և զի այսմ օրի_
նակի առեալ աստիձանաց մե
ծութեն սաստկութեն՝ որչափ
առաւել տևողական իցէ, այն
չափ առաւել ահարկու դժն_
դակ լինի: Իսկ աստի ունիմք
ստուգել, թէ տանջանքն, որ
ա.և.լ;

տեւէ յանվերջ՝ եւ յանդրա-
ժամն՝ յանսպառ աւուրս, եւ
յանհուն դարս, է անհուն ցաւ
որոյ իմացումն ամ՝ մարդկե-
ղէն մնայ է անհաս ։ Բայց
ոմ զի կերպիւ իմն իմասցիս
զայս ․ եւ ՚ի խորհուրդս քո
նկարեսցես՝ խորհեաց, զի եթէ
տուեալ լինէր դժոխայնոյն
ընտրել զմինն յերկուց աստի.
ցս է․ կամ կրել միայն զխայթ-
ուած մեղուի միոյ յաչս իւր՝
յարաժամ՝ յանվախճան յաւի-
տեանս, եւ կամ կրել ոչ զմի
միայն, այլ զբովանդակ տան-
ջանս դժոխոց ընդ այնքան
հազար ամս, որքան են աս-
տեղք երկնից. եւ ոչ աւելի։ Հա
ւաստիէ, թէ ընտրէին զկրելն
զամ դժնդակ տանջանսն դժո
խոց. մի զի ունի զվերջ, քան
թէ կրել միայն զխայթուածն

մեղուէն միոյ անվերջ անվախ-
ճան: Մ՛ի գիտեմ տանջանք որ
չափ և ծանր իցեն, երբ չեն
յաւիտենականք, համեմա-
տեալ յաւիտենականին՝ են
կարճք, և առ ոչինչ համարե-
լիք: Աւստի որ միանգամ ոչ է
յաւիտենական, թէ 'ի բա-
րեաց մասին իցէ, և թէ չա-
րեաց՝ ոչինչ է. ո̃պ ա̃ծուսոյց
հոգև որ հարքն ասեն, ը̃ս սր̃յն
հերոնիմոսի, որ ասէ, 'ի վր̃
սաղմոսին. 89. Ոչ ինչ կարէ
լինել մեծ, որ ունի վախճան: Նու-
արդ՝ ո̃պ անհնար է մարդոյ զա-
նեզրականն մտօք պարունա-
կել, սոյն̃պ և անհնարէ չափա-
կալ 'ի նմանէ. բայց եթէ ա-
ռաւել քն̃ զայսահարս մտեգ-
նեալ իցէ, ո̃պ հանդիպի մեղ-
սաւորաց: քանզի չերկնչելով
չերկնչին 'ի յաւիտենականու-

թէ

թէ տանջանաց, զոր սպառ-
նալ ած: Նաև պատճառ սր, ըստ
սասայելուն, այսահարութի
ամպարշտութե՛ նց է. զի յոր-
ժամ ընդ առաջ եկանել առիթ
ինչ մեղաց, և նոյն ժամային,
և յողորմութէն այ ներկայա-
նալ և ս յիշատակն յաւիտենա
կան տանջանաց 'ի ձեռն խղ-
ճի մտաց. նոքա մոլեգնեալք
վաղվաղակի կլանեն զայն յի-
շատակն յաւիտենական տան-
ջանաց, և ոչ փոքր մի ծամեն
խոկմամբ, զի զգացցի դառ-
նութին յաւիտենականութեան
տանջանաց, որպ և զմեղսն խոկ
վաղվաղակի կլանեն, և ոչ
փոքր մի յապաղեն 'ի միտ առ-
նուլ զահաւոր դատաստանն.
որ յետոյ 'ի մէջ հասանէ մեղաց:
Սատի ասի առակաց. 19. 28.
Բերան ամբարշտաց կլանէ զդատաս-

 տանս:

տանս: Ո՛վ անձամբ անձին ըն-
րեալ մոլեգնութեան մեղսասի-
րաց: Ա՛յլ մեք դարձեալ կրկ-
նեսցուք զձայնս յաւիտենա-
կանութեան տանջանաց, որ կա-
րէ չափել զայն, որ 'ի վեր է քան
զամ չափ, և սկիզբն արաս-
ցուք այսպէս: Ա՛ռ 'ի ձեռս քո
զժամացոյց աւազոյ, և ասաս-
ցես ցանձն քո. եթէ ես դատա-
պարտեցայց մատնիլ տանջա-
նաց հրոյ, և կալ 'ի նոյն տան-
ջանս զայնքան հազար ամս,
որքան են հատք աւազոյս. առ
դարև 'ի սպառիլ սոր, վերջա-
նան տանջանք իմ: Բայց ես
տեսանեմ, զի յորժամ հեռաէ
Ծս հաստատեալ կայ, չևևս է
եօթն հազար ամ լցեալ։ ուրեմն
ընդ այսչափ անցեալ ժամա-
նակս դեռևս յաւազոյ աստի
եօթն հատիկ ևս ոչ է 'ի բաց
ծար.

բարձեալ։ Ապա որչափ բա-
զում երկար ժամանակաց պէտք
են անցանել, որպ զի թիւն
հատից այս աւազակուտիս
սպառեսցի։ Եւ զի այս ճշ-
մարտիւ այսպէս է, եկ դու
զևս առաւելն խորհեսցուք։
եթէ ես 'ի մահուչափ մեղս
մեռայց, ճշմարտութիւն հաւա
տոյ սորոյ է, թէ 'ի հուրն
յաւիտենական դատապար-
տեցայց։ իսկ յայտ է, թէ տևո
ղութիւն յաւիտենականութե
է անվերջ և անվախճան։ ու-
րեմն եթէ 'ի մահուչափ մեղս
մեռայց, յետ կրելոյ իմոյ ըզ-
դժնդակ տանջանս դժոխոց
ընդ այնքան հազար ամս՝ որ-
քան են հատք աւազոյ ժամա
ցուցիս, ոչինչ վճարի և ոչինչ
պակասի 'ի յաւիտենականու-
թէ անտի, այլ տակաւին ամ

բողջ մնայ յաւիտենականու-
թեան։ Նաեւ ոչ այսչափ միայն,
այլ եւ յետ կրելոյ խնդ զնոյն
տանջանս ընդ. այնքան բիւր
ամս ոչ որքան են հասք ժա-
մնացուցեան աւազոյս, այլ որ-
չափ լայնատարած ովկեղերա-
ւիս աւազակոյտ լերին միոյ
մինչեւ յերկինս բարձրացելոյ.
եւ զնոյն կրկնեալ այնքանիցս
որքան են աւազք ծովու, ամ-
բեք ծառոց, փետուրք թռչ-
նոց, թեփք ձկանց, հերք կեն-
դանեաց, մանրամաղ փոշիք
հիւղէից յօդս, եւ շիթք անձ-
րեւաց ամպոց, որք տեղացեալ
են. եւ որք մինչեւ 'ի կատարած
ծի տեղասցին, որ կազմեն ըզ
թիւ անհամար 'ի մարդկանէ,
եւ անպարփակ 'ի մտաց հողա-
նիւթից՝ թողեալ 'ի բաց ըզ-
հրեշտակս, որք հազիւ հազ
բազ-

բազմութեան հաստատ լինելոյն •
Ակայն այսու ամի՛ ոչինչ պա_
կասի ՚ի չափոյ յաւիտենակա_
նութեն • այլ տակաւին տան_
ջելոց եմ • քանզի ամքս այսո_
քիկ անցանելով անցանեն •
բայց ոչինչ պակասի ՚ի տան_
ջանաց իմոց , զի տակաւին յա
ւիտենականութեան ամբողջ
մնայ յաւիտեան ։ Ո՛վ ահաւոր
յաւիտենականութիւն դառնա_
պարտութեան • ո՛վ տակաւին ան
երկիւղութիւն մեղաւորաց ՚ի
՚ի մեղս յամառելոց ։ Ո՛րդ՝ սա_
քա կամ ոչ ունին զգործադիր
հաւատ , և կամ թափեալ են
՚ի մտաց արբեցութեամբ մեղաց ։
Ա՛յլ դու զինչ ասես մի քոյ, որ
զատաչիկ պիրոդ ընթեռ_
նուս , եթէ անդարձ կաս ՚ի
մեղս ։ Եթէ ժխտես , կամ
չգիտես , թէ յերկարել ՚ի

մեզս դնես զհոգիդ 'ի վտան_
գի անկանելոյ 'ի խորխորատն
յայն անել յաւիտեանս ։ ոչ կա
րես ժխտել. և ոչ պարտիս
ադխտանալ՝ եթէ քրիստոն_
եայ ես. այլ Ճշմարտութեն ա
սել, թէ այսպէս կալով՝ չես
հեռի 'ի խորխորատէ անտի որ
չափ քայլ մի ոտից, մանաւանդ,
թէ և զմինն յոտից արդէն
'ի միջի ունիս. 'ի դէպ եկեալ
ասել ածահօրն դաւթի. թէ
ընդ իս և ընդ մահ չէ այլ ինչ անջրպետ
եալ բայց եթէ քայլ մի. 1. թագ. 20.3.
( Բ՟ այլում թարգմանութեն ։ )
զի յիւրաքանչիւր վայրկենի
կարէ հասանիլ քեզ մահ. և
այնպէս յիւրաքանչիւր վայր_
կենի կարես դահավիժիլ 'ի
նոյն խորխորատ ։ ապա ունիս
ժամանակ անկանելոյ 'ի վիհն
տանջանաց, մի վայրկեան և

եթ

եթ : տեսանես , որչափ մեր_
ձեալ ես 'ի կորուստ : Իսկ արդ՝
գտնել զինքն 'ի յայտնի վտան_
գի զամս հազար 'ի հուր գե_
հեննոյն մնալոյ , 'ի սակս փոքր
և չնչին վաղանցուկ հեշտու_
թեն մարմնոյ՝ է յիմարութի մեծ.
Իսկ գտնել զանձն 'ի վտանգի
զամս տասն հազար զնոյն տան
ջանս կրելոյ է յիմարութի մե_
ծագոյն . և վտանգելն զանձն
'ի կրել զնոյն հարիւր հազար
ամս , է յիմարութի ամենա_
մեծ : ուրեմն գտնել զանձն 'ի
վտանգի կրելոյ զնոյն 'ի յան_
վախճան յաւիտեանս , է ան_
չափ և անսահմանելի յիմա_
րութի : վա՜յ ասէ սբն բեռնար
դոս հիացմամբ . Օ՜չնչի այսչափ
փոքր հեշտութեն այնչափ տառապանաց
աղէտ : առ եւ լա . 'ի յեաւն ոյ :
Բայց զդատաստանի փութով

հեռի առնել զքեզ 'ի վտանգէ յաւիտենական դատապարտութե, մի՛ հաւատասցես յիմարսդ. որք ասեն, թէ մտադիւր խոկումն յաւիտենականութե պատճառէ մարդոյ զկորուստ խելաց. ո՛չ է այդպ, այլ մանաւանդ հակառակն այդմ. մտադիւր խոկումն նմին՝ տայ մարդոյ զկորուսեալ խելսն անդրէն 'ի գլուխ իւր դարձուցանել. քանզի խոկմամբ յաւիտենականութեն որք կոյսն թերեզիա. և այլ բազումք եղեն իմաստունք ըստ այ. և հասին 'ի գերագոյն սրբութի: որպէս և այժմ եկեղեցին տօնէ զնոսա. և զսոցա վարս նոցա տայ մեզ յօրինակ փրկութե:

Թէ յարափոփոխական պանծանքն գծո_
ւոց են անպայմանելի․ զի է,
անմշտնջենաւոր :

Մտածեա՛ երկդ, զի եթէ
անվերջ յաջորդութիւն դա_
րուց 'ի դժոխս զգոյն ինչ մեղ_
մանալ մատուցանէր տանջա_
նացն յայլևայլութէ․ խրատել
ըն այսմ մասին յոյժ համբերելի
լինէր․ Բայց անհամբերելի լի_
նի․ զի պարտ է նմա միշտ նոյն
լինել 'ի տանջանս, և ոչ այլ_
ևայլ․ թէպէտ մանանայն առ_
որդիան ինէլի զ̃ամ համ մատու_
ցանէր․ բայց յայսմ տմի եղև_
նդ 'ի զզուանս յանապատե_
անդ․ մն զի միշտ նոյն էր ե̅ր
երևելոյն․ ուստի ասացին․

Բ հա_

Ահաւասիկ ցամաքեալ են անձինք մեր, և ոչ ուրեք, Բայց միայն ՚ի մանանայն են աչք մեր : Թուոց . 11 . 6 . Այս պատահեցաւ այս յեկդուամ ամի ճանապարհորդութեան նո_ ցա . որք ասեն մեկնիչք . այս զինչ լինէրն մեզ յետ քառասուն ամաց, և զինչ յետ դարու մի_ ոյ : Բայց արդ՝ որք յապաղիք դառնալ ՚ի մեղաց, գիտաս_ ջիք, զի այն յաւիտենակա_ նութիւն, որ ձեզ հանդերձեալ մնայ, այնպիսի ինչ է, որ թէ և սպասէր ձեզ՝ երթալ ձեզ յընտիր հանդերձանօք յօրի_ նեալ խրախճանս ինչ, սակայն և այնպէս՝ նայլին իսկ համա_ դամ խորտիկօք դիզէր ՚ի գլու_ խըս ձեր զանչափ ձանձրոյթ և զտաղտկութիւն, մինչև ըմ_ բռնիլ ձեզ ՚ի յետին անտանե_ լի յուսահատութիւն, և ՚ի տագ

նապս

նապս անդադար , ապա յո՞լ.
ղխի յանհնարին յուսահա_
տութ՟ի ըմբռնեսցէ զձեզ յա
ւիտենականութ՟ին, որ սպա_
նէ ձեզ՝ ոչ եթէ ածել զձեզ 'ի
խրախճանս , այլ 'ի տարտա_
րոսն ամ՟ տանջանաց դժոխոց
'ի յաւիտեան . ուր միշտ նոյն
լինի ձեզ յաւիտենականու_
թ՟ին 'ի յամ՟ տանջանս : Դուք
ոչ կարէք ժամ մի տեւել յուն
կնդրութ՟ե քարոզի միոյ , ե_
թէ չիցէ քարոզն այն պէսպի
սութ՟ բանից՝ և եղանակաց
խօսելոյ յօրինեալ : Իւ զի՞նչ
ասեմ քարոզ , զի և խաղուց
դերասանաց անդամ երկարու
թե ոչ կարէք տոկալ , եթէ
չիցեն 'ի նմին արարողութ՟եց
կամ՝ մասանց խաղարկութ՟ե
անդամ անդամ փոփոխութ՟ի:
Ապա զիա՞րդ ունիցիք տոկալ

'ի

՚ի յաւիտենական թշուառու_
թե առանց երբեք թեթեւա_
նալոյ ՚ի տանջանաց, և ա_
ռանց ինչ փոփոխութե : Որք
բնակին յայրեցած գօտի ան_
ուանեալ մասին երկրի, թէ_
պէտ ՚ի տուընջեան տապին՝ զա
րեգակն ունելով ՚ի վր գագա
թանց իւրեանց · բայց ՚ի գի_
շերի զովացեալ կազդուրին :
Եւ ցաւագին հիւանդն եր_
բեմն երբեմն նիրհելով փոքր
մի զցաւսն մոռանայ : Եւ զի
համառօտ ասացից, ոչ լինի
յծի ասատ այնչափ սաստիկ
վիշտ հոգւոյ, կամ մարմնոյ,
որ ՚ի փոփոխումն ժամանակի
զփոփոխումն ինչ ոչ ընկալցի ·
բայց այս գլխովին ՚ի բաց հա
տեալ է ՚ի դատապարտեալ մե
ղաւորաց · Ուստի ոչ դոյն
փոփոխութե ինչ ակնկալութե

ամե_

ամենեւին, այլ յաւէտ ներքոյ
անկեալ կայցեն կայծականց
ա̄ծային արդարութե̄, եւ ոչ
երբէք եկեսցէ նոց գիշեր, կամ՝
քուն։ եւ ոչ եւս ժամանակ ինչ.
որ մեղմացուսցէ զվէրս ցա-
ւոց նոցին։ եթէ գոնէ կարէ-
ին խաբել զինքեանս եղկելիքն
հաւատալ, թէ ՚ի կատարումն
այսչափ կամ՝ այնչափ ժամա-
նակաց եղիցի տանջնաց իւր-
եանց մեղմանալ փոքր մի
(թէպէտ եւ անհնարին է այսմ՝
լինիլ.) լինէր նոցա սուտ ա-
կնկալութի̄ ինչ։ սակայն եւ
ոչ զայս սուտ ակնկալութիւ̄
ունին մատուցանել անձանց
թշուառականքն։ Ո̄ զի կա-
մի ա̄ծ զի նոքա հանապազ ա-
ռաջի աչաց ունիցին զանջինջ
գրեալ գիրն յաւիտենական
դատապարտութե̄ իւրեանց,

եւ

և մի՛ երբէք կարասցեն ’ի նմա
նէ զմիտսն յայլ ինչ շրջել. ոչ
զի միշտ տեսցեն զայն, և տագ-
նապեսցին : Իսկ արդ՝ եթէ
որ ’ի ժամն ինչ ’ի տառապանս
իցէ, իւրաքանչիւր ժամ՛ եր
կար թուի ՛նմա իբրև աւուր
միոյ երկարութի, ապա ո՛րչափ
երկար թուեսցին եղկելեացն
այնոցիկ տանջանքն և տառա
պանքն յանթիւ դարս ամեն-
ևին անընդհատ : Ո՜վ ան-
հնարին աղետից. զի դատա-
պարտեալքն ոչ միայն ’ի յաւի
տեան տանջեսցին, այլև ’ի
յաւիտենականութէ անտի
տագնապեալ տառապեսցին:
զի ո՞չ ասացաք, յաւիտենա-
կանութիւն միշտ առաջի մնայ
նց ակնյանդ իմանս կայ. որ ’ի
ձեռն յարաժամական մտա-
ծութենց ’ի վր իւրաքանչիւր

ցա-

յաւուց և տանջնց նց եղեալ ,
սաստկագոյնս ծանրացուցանէ
զնոսին : վասն զի յարաժամ խոկան
թէ՝ պատիժք զորս կրեն՝ ոչ եր
բէք են դադարելոց՝ այլ միշտ
մնալոց : և այսպէս կերպիւ իմն
յուրաքանչիւր վայրկենի զբով
անդադար յաւիտենականութեան չարա
չար կիրան միանգամայն կրեն :
վասն իմաստութեան վճռովք զայն յա
ւիտենականութիւն համեմատեն միա
ձոյլ ամենահաւասար ամենաբա
լոր ամենամեծ և ամենածանր
կապարեայ գնտոյ միոյ : զի որպէս
այսպիսի գունտն՝ ի վր ամենե
իմն հարթ մակարդակի եդեալ
թէպէտ ոչ իւիք շօշափէ զայն՝
բայց եթէ մէն մի կիտով իւ
րով . սակայն բովանդակ ծան
րութ. իւրով միանգամայն կայ
՚ի վր նր : Այնպէս և ՚ի դժոխս՝
թէպէտ իւրաքանչիւրն ՚ի տան

ջա

Զմնաց ըստ ինքեան առեալ, միայն ներկայ մասամբն խ-րով կացեալ 'ի մէջ տանջէ ըղ գատապարտեալսն, բայց հան դերձ յաւիտենականութին խորհեալ, ոչ միայն ներկայ մասամբն խրով, այլեւ բովան դակ հանդերձելովքն կացեալ 'ի մէջ, միանգամայն տանջէ: Ոնկ ասէ Եւսեբիոս գաղղի-կեան, թէ ընդ ներքին տանջա-նաց՝ եւ շօշափելի տանջանացն պժին: Եւ առաւել եւս չարչարին յակնկալութէ հանդերձե-լոցն. քան յառաջիկայութէ ներկայիցն: քանզի ըստ առա կին, դժնդակ է քան զպատե րազմն, երկիւղն պատերազ մին: Եւ այսպէս կերպիւ իմն իւրաքանչիւր բոպէ տանջա-նացն՝ երկիւղիւն յաւիտենա-կանութեն փոխի 'ի բոլոր յաւի

տե-

տենականութի տանջանաց :
Աստի տոյն այս երկիւղս յա-
ւիտենականութե՛ խիստ քան
զամենայն զբոլոր դահճի կանխե-
ցուցանէ և կրկնապատկէ ըղ-
տանջանս դատապարտելոց
յիւրաքանչիւր վայրկենի : Աղ-
աչաւորութենս յաւիտենակա
նութենէ : Աւ արդ՝ դու ե՛ղբայր,
որ զառաջիկայ գիրս ընթեր
ցես զարհուրիս, եթէ 'ի մեղան
չելդ ոչ զահի հարկանիս, գի-
տասջի՛ր, զի դու 'ի նայելդ
ընդ նկարեալ վիհ մի, զար-
հուրիս. բայց 'ի յարկանելդ
զքեզ յիսկական ճշմարիտ
վիհ մի՝ ոչ երկնչիս :

### Թէ յաւիտենականութիւն դժոխոց է արդարաչափ հատուցումն մա_ հուչափ մեղուցելոց ։

Մտածեա՛ երրորդ, թէ վ՟ն զի մարդիկ զինչ և խորհին՝ միշտ մարդկօրէն խորհին. վ՟նկ հիացեալ ապշին ընդ յաւիտենականութ՟ին դատապարտութե՟ն մեղուցելոց, և ասեն, զի՞ է զի ա՟ծ վ՟ն մե՟ն մի մահու չափ մեղաց, որ 'ի սուղ ժամանա_ կի գործեալ լինի, դատապարտէ զմարդն 'ի յանվախճան տանջանս և 'ի յաւիտեան տանջէ զնա ։ Նոյ զարմացման նշ՟ պատճառն է, վ՟ն զի առ ակարութե՟ մտաց իւրեանց զայս խստութ՟իս ա՟յ ոչ կարեն հա_

մե_

մեմատել ընդ նորին ածային բարութեան, որով անպատմե լի գթով գթայ 'ի վր մեր։ Եւ ոչ կարեն համեմատել ըն ած-ային արդարութեան, որ ոչ պատժէ ըն չափն անցել։ Մանաւանդ թէ 'ի վայր քան զարժանն պատժէ զմեղուցեալսն։ Բայց ոչ է մեզ արժան ընդ այնպի-սի ապշութի նց սքանչանալ, զի այս հաստատեալ է 'ի նա յաղագս տգիտութե նց զհո-գեւոր իրօք ։ քանզի ոչ ասէ առաքեալն, 1. կոր. 2. 14. շնչա-ւոր մարդ ո՛չ ընդունի զհոգւոյն Այ զի յիմարութի է նմա, եւ ո՛չ կարէ գիտել։ Եթէ իմանային մե-ղաւորքն զչարութին մեղաց իւրեանց, ոչ զարմանային, թէ զիարդ ած վս մն մի մա-հուչափ մեղաց արարեալ է ըղ-յաւիտենական դժոխս, այլ

զար

պարմանային, թէ զխարդ ած
չէր իւրաքանչիւր մեղաց ոչ է
արարեալ աւելի.քան զմին, և
ոչ է եղեալ մի իւրաքանչիւր
նուաղի դժրելոյ մեղաւորին
զկուտակ իմն տանջանաց եօթ
նապատիկ առաւել դժնդակի.
բայց սրբն օգոստինոս բարուք
ծանեաւ զայս Ճշմարտութիւն.
ուստի սկսանէ ցուցանել, թէ
մի այսորիկ յաւիտենական է
թշուառութիւն դատապար-
տելոց, զի չարութիւն նոյ՝ սմա
է համաչափ. քանզի յաղագս
քաղաքին այ. գիրք. 9. գլ. 13.
ասէ. ոչ երբէք յաւիտենական լինէր
թշուառութիւն դիւաց. եթէ չարու-
թիւն ո՛չ էր մեծ: Սորոյ ծանիր,
զի ամ մահուչափ մեղք յաղա-
գս լինելոյ իւրոյ արհամար-
հութի իմն կամացն այ՝ ծա-
ծուկ, կամ բացայայտ, է ա-

նարգել զԱծ · Իսկ անարգան
քրն մեծանայ յերկուց կող-
մանց, որ 'ի նուաստութէ ա-
նարգողին, և 'ի մեծութէ նոր
որ անարգի։ Ապա քանզի ան
հունէ մեծ վայելչութի փա-
ռացն Այ · և յոյժ յետին է
նուաստութին մեր · Այլ անար
գելն զԱծ՝ է վարքապէս ան-
հուն, և է խոր ինչ չարութե,
և առաւել գարշ և զազիր
զզուելի քն զամ անթիւ անար
գանս արարածս անթիւ ստեղ
ծուածոց։ Իսկ զհետ այսո-
րիկ 'ի միտ առ, թէ պարտ է
պատժոյն համեմատիլ մե-
ղացն · որպէս զի նովաւ անդրէն
հաստատեսցի խախտեալ կար
գն, և եղծեալ պատիւն, զորս
մեղաւորն խախտեաց, և եղ
ծեաց մեղօք · և վոյ քստ իրս
ւանց պարտ է և պատժոյն ան

հուն լինիլ: Բայց զի ոչ կա-
րէ այս լինիլ անհուն սաստ-
կութ՟բ, որովհետեւ ստեղծ-
ուածն յաղագս չափաւոր լինե-
լոյ իւրոյ անընդունակ է ան-
չափ սաստկութեան տանջանաց․
Ս՟նկ 'ի դէպ եղեւ զի պատիժն
արհամարհողին ա՟յ անհուն
լիցի ոչ սաստկութ՟բ, այլ երկա-
րաձգութ՟բ 'ի յաւիտեանս յա-
ւիտենից տեւելով: Ճշ-
մարտուիս զայս եւ ստուգա-
գոյն ծանիցես, եթէ 'ի միտ
առցես, թէ մի միայն մեղաց
չարութիւն եւ վնասն է այնչափ
մեծ, մինչեւ անհնարին լինիլ
նմա յաղթել եւ վճարել ա՟մ բա-
րեգործութ՟բ համօրէն սուրբ
ստեղծուածոց: եւ վասն հարկ
եղեւ առ վճարումն պարտուց
սորա՝ որդւոյն ա՟յ զգանձն ա՟ծ-
ային արեան իւրոյ հանել յե-
րա-

րակաց. և մատուցանել յար-
դար գլին. որպ՟ ասէ Լեսսիոս յա-
ղագս ա՟ծային կատարելու-
թեանց, յերեքտասաներորդ մա-
տենի 'ի թիւն. 183. գլ. 26.
համր. 187: Իսկ արդ՝ չարն մե-
ղաց՝ որ ոչ կարէ քաւիլ առա-
քինական գործովք մարդկան
թէև ընդ ամ՟ անվախճան ժա-
մանակս հանապազորդեսցի
բարեգործութեն, յայտ է, թէ
ա՟ծ իրաւանց արժանի է քան
զամ՟ ժամանակ երկարատև
պատժոյ միում. և այսպէս
արժանի է մշտնջենակն տան-
ջանաց: Նա յորժամ՝ այսպի-
սի պատժով պատժի մեղու-
ցեալն ընդդէմ այ՟, այսուհետ
խափանի արհամարհելն այ՟.
և այնմ՟ ոչ կարէ հասանիլ նմ՟
արհամարհութի ինչ. եթէ
ոչ 'ի յիմարաց: Բայց եթէ

պատիժն ընդդէմ նմա մեղու-
ցելոց՝ չէր անվերջ մշտնջենա-
կան, մարթէր հասանիլ նմա՝
և վճարոյ նոր արհամարհութեն
յումմէ և իցէ, որովհետև,
ըստ հասարակ առակին, որ ոչ
է յաւիտենական, ոչինչ է։ Նաև այս
պէս այն, որ ՚ի հանդերձեալ
յաւիտենականութեն եղիցի
ոչինչ. կարէ և այժմ համա-
րիլ ոչինչ. և այնպէս միշտ հա-
մարիլ ոչինչ։ Նա այսու օրի-
նակաւ տրամաբանելով խոհա-
նամք՝ թէ անբաւ բարութիւն՝
որ է ՚ի յԱծ, ոչ է ՚ի նմա յիմա-
րական անփոյթութի ինչ զգա-
ցեալ, որպէս անմիտ մեղաւորքն
կարծեն, այլ է սրբութի ան-
հուն անչափապէս հակառա-
կող մեղաց՝ և ատեցող նմին,
և յայսպիսի սրբութէ ստիպե-
ցուցանել զխուր ընդդիմութին
և

և զգարշումն 'ի մեղաց, բուռն
առնելով մեղաւորաց համե-
մատ տուժանօք, քան է անչափ
հատուցիւք տուժել զվնասն
արարեալ մեղօք: Իսկ արդ՝ որ
զկշիռն ա̄ծային արդարուե̄ 'ի
ձեռն առնու, և զվնասն մահու-
չափ մեղաց՝ և զտուժանս նո-
րին կշռէ, այսինքն ուղիղ կշռէ,
և ոչ վրիպի: Իսկ որ ոչ զայս
կշիռ, այլ զկշիռն Տի առնու.
որ խաբէ, և խաբի, նա ոչ ու-
ղիղ կշռէ, այլ թիւրի: Յայս
չափ յայտնի բանիցս, որ ըն-
թեռնուս զգիրս զայս, ունիս
ըստ կարի 'ի միտ առնուլ, թէ
որչափ սոսկալի չար է մահու-
չափ մեղքն, որ յինքեան իբ-
րև 'ի փոքր իբրու մ' բովանդա-
կէ զյաւիտենականութիւն յե-
տին թշուառութե̄: Ուստի
եթէ կարող լինէիր մտօք 'ի

ներքս անդր 'ի դուռն և 'ի չա-
րաբոյն խորս նո՛ր մտանել, և
յոյզ առնել՝ անդէն փաղփա-
կի տեսանէիր 'ի նմա զսեր-
մանս յաւիտենական հրոյ,
յաւերժական ողբոց և սգոյ,
անել անձուկ բանտի, անզրաւ
տարտարոսի, անսպառ դար-
շահոտութե՛, անպտուղ ապա-
շաւութե՛, յանհնարին յու-
սահատութե՛, և 'ի յաւիտեանս
յաւիտենից կորստեան ա՛մ
բարութե՛: Մ՛ի կի զայս ա՛մ մի
միայն մտահուչափ մեղքն՝ ևս
'ի յետին սուղ վաղանցուկ ներ-
գործութե՛ իւրում բովանդա-
կէ. ո՞չ է տեսանել 'ի փոքրիկ
ձուն քարբի թունաւոր սե-
րունդ մի փակեալ. և ընդ նմին
մահ, ոչ մի, այլ բազում: Նու-
արդ՝ ահա այս է դժոխքն:
Բայց եթէ զխակն դժոխոց կա-
մես-

մեղացուք նշանակէ, և այս ևս
ոչ է լոկ դժոխք. այլ սաստկեր
լինչ դժխոց ։ Ոչ զի լինքն դը-
ժոխքն է անհնին չափ առուել
չար քան զոր ասասցի 'ի մէնջ.
և այնչափ ևս յաւելցի դժն-
դակութիւնն, որչափ անօրէ-
նութիւքն բազմասցին ։ Ընկ
երանելին յոբ զդժոխքն ան-
ուանէ երկիր խաւարամածէ, և խա-
ւարէ, ուր ստուեր մահու, և ոչինչ
կարգ, այլ մշտնջենաւոր արհաւիրք
բնակեն ։ յոբ. 10. 22։ Ուր արդ՝
'ի միտ առեր արդեօք եղբայր
իմ բաղձալի, զայսոսիկ ճշմար-
տութիւս ։ Եթէ ստուգիւ 'ի
միտ առեր, ապա զիարդ կա-
րասցէ լինիլ, թէ յաղագս
այնչափ վաղանցուկ զազիր
հեշտութեան մարմնոյ, կամ 'ի
սակս չնչին հաճուէ կամացդ,
կամ յաղագս սնոտի ցեցակեր

փառ-

փտելի կորստական ընչից ինչ.
կամ մն անցաւոր հանգս֊
տեան ինչ սրտի, և կամ մն այլ
զինչ և իցէ իրաց մահկանա֊
ցու կենացդ պիտոյից՝ մեղան֊
չելով ընկեսցես զքեզ 'ի նոյն
խորխորատն կամակար մտօք:
Ո՞չ թուի ինձ, թէ չևևս 'ի
միտ առեր զճշմարտութ՟ին ա֊
սացելոցս: արդարև չևևս 'ի
միտ առեր. ընթերցար, բայց
վեր 'ի վերոյ խորհեցար: Մ՟
որոյ և ոչ իմացար: Այլ եթէ
ամենևին չխորհեցար, ապա
զի՞ գործես. զի՞ կաս ննջեալ
'ի քուն թմրութե: Օ՜ի
խորդաս. արի կարդա զոր ա՟ծ
քո. յովն. 1. 6: Ահաւադիկ
ալէկոծութ՟իք ունին զքեզ.
փոքր միւս ևս և նաւաբեկ եղ֊
եալ կորնչիս: Եթէ պատու֊
հասն կորստեան չէր անսուտ,

այլ

այլ ընդ կասկածանօք, տանջա
ւէին այսուհետև պարտ էր քեզ
յամ րոպէի քամահել հոգւով
և մարմնով։ այլ զի՞ գործես
ցես, զի ստուգագոյն են հա-
ւատով քան զմն ճշմարտու
թի։ Ապա ընդէ՞ր կաս թմբ-
րեալ, արի՛ կարդա՛ զիր մծ
քո զօրհանապազ, զի փրկես-
ցէ զքեզ 'ի վտանգէ անտի,
փութա՛ 'ի խոստովանութի՟,
և յանձն առ զապաշխարութիւնս.
հեռա՛ց լեր 'ի չար ընկերակցու-
թեց. Փախի՛ր 'ի վտանգէից
մեղանչելոյ. սովորեցո՛ զքեզ
աղօթասէր լինել, և ստէպ
մատչիլ առ ամենասուրբ խոր-
հուրդս ապաշխարութե՟ն, և հաղոր
դութե՟ն։ Իսկ եթէ պիտոյ իցէ
առ աներկեան առնելոյ զփր
կութի հոգւոյդ, հրաժարեա՛
ևս յշխէ։ 'Ի վախճան մահու ծա

նի՛ր

նէր · զի որչափ առաւել հո-
գասցես զփրկութիւն հոգւոյդ
հաւաստի առնել, այն ոչ լի-
նի 'ի վեր քան զչափն։ Ոի ուր
կայ 'ի միջի վտանգ յաւիտենա-
կան փրկութե, չկայ անդ ա-
մենևին ապահովութի հան-
գստեան · ոպ ասէ ոմն 'ի վար-
դապետաց։



Աղօթք առ ամենասբ հոգւոյն ճարեան,
որ ընծայեցի մեզ 'ի Տնէ պտղ-
հոսեալ յաւիտենականն :

Ով փառաւորեալ յամ՛ ազ-
գաց, և յերկնային զօրաց՝ ա-
մենամաքուր տիրուհի սբ ած-
ածին: Դու զհօրն լուսոյ զոր-
դին հարազատ, ըստ մերումն
բնութեն՝ 'ի հոգւոյն սբյ յղու-
թբ ծնար կուսութբ. և մայ-
րենի խնամով 'ի գիրկս քո բար-
ձեալ ամենամաքուր ստեանց
քոց կաթամբ զարգացուցեր
սնուցեալ: Ոչ կայ որք յիրաւի
յարարածս համասար քեզ
մերձաւոր և նմանօղ նմա
գթութբ և ողորմութբ, որ
բոլորովին սէր է և գթութն
դէպ

դէպ 'ի մեղաւորս, որոց ըղ-
դարձն 'ի մեղաց, և զփրկու-
թիւն 'ի յաւիտենական դատա
պարտութենէ խնդրէ, և 'ի նոյն
խնդրայ և բերկրի · Զնոյն և
դու առնես անպատմելի գը-
թութեամբ, մայր ողորմութեան սր̃
ա̃ծածին, ըղձանալով միածնի
որդւոյդ փառացն առաւե-
լութեան փրկութե̃ բազմաց ամ
բիծ արեամբն գնեալ հաւա
տացելոց ։ Բարեխօս լինիս մ̃
նջ զդարձն շնորհել, և անդ-
քէն զնոսա յառաջին շնորհս
և 'ի խաչ իւր հաստատել ։ Ըղ-
և յիս ցուցցես աղաչեմ, զմե-
ծի մարդասիրութեան նր̃ զնմա
նութի̃ յանձին քում բերելոյ
զգործ սքանչելի գթութեան · ո-
րում 'թէպէտ և բազում անօ
րէնութեամբ եմ յետին անար-
ժան, այլ զղջացեալ յանմոր-

տէ , յուսով մեծաւ զանուն
քո կարդամ , յոյս մեղաւո_
րաց , ապաւէն նաւակոծե_
լոց , աստղ առաւօտու՝ ո՜վ
կոյս մարիամ :

Օգնական լեր աղաչեմ հո_
գւոյս , ազատել 'ի խորութե̃
մեղաց գետոյս , և յանել յա
ւիտենական դատապարտու_
թենէ դժոխոց . որում ես
արդար իրաւամբք արժանի
եմ վասն բազմութեան մե_
ղաց իմոց : Հաստատեալ է
յոյս իմ 'ի քեզ . թէ ոչ ա_
րտասցես զանց զինև առ որ_
դին քո վասն իմ միջնորդել .
որ և զանձն իւր ետ 'ի մահ
վասն փրկութեան տառապե
լոյս : Օ ի՞նչ լինէր ինձ , ե_
թէ այժմ լեալ էի դատա_
պարտեալ՝ և մատնեալ ան_
շէջ հրոյն դժոխոց . ուր ոչ

երբէք է տեսանել զքեզ . և
ոչ զերեսս քո . այլ ունել զնա
և զքեզ 'ի թշնամի 'ի յաւի_
տեան ։ Նաև արդ՝ զի մի՛ եղի_
ցի ինձ այս , աղաչեմ՝ բա_
րեխօս լեր առ նա՝ թողու_
թիւն շնորհել յանցանաց ի_
մոց . յորոց յամենայն սրտէ
զղջանամ . և ազատութիւն
յահագին դատապարտութէ
դժոխոց , որ է անել անվախ
ճան ։ Արդարև անարժան
եմ ես խնդրուածոյս այսմ
լսութեան . բայց ժտեմ զի
արասցի ինձ շնորհս այս՝ ոչ
վասն իմ ինչ արժանաւորու
թեան , այլ վասն չարչարա_
նաց տեառն իմոյ արդեանց ,
և վասն քոյին ամենայարգոյ
բարեխօսութե ։ Այո՝ մայր
գթութեան , որպէս զի ա_
նուն նորա սուրբ՝ և յիս մե
ծաս_

ծառայի . և քոյին միջնորդու-
թ՞իդ բարեբանեալ գովեսցի ։
Յիշեա՛ ամենօրհնեալ կոյս .
զի յաւուր ելից նորա՝ յոր-
ժամ առ խաչին կայիր ցա-
ւագին , տուեալ եղեր մեզ
'ի նմանէ 'ի բարեխօս և 'ի
մայր ։ արդ՝ լե՛ր զգործդ խը-
նամոց այժմ 'ի վերայ իմ գը-
թով , զոր յայնժամ յանձն
առեր կատարել 'ի մեզ որդ-
ւոյդ սիրով ։ Աղաթեա՛ 'ի նը-
մանէ՝ տալ ինձ զշնորհ չան-
կանելոյ երբէք 'ի մեղս առ 'ի
մահ . զի հաւատարմութ͞ք
մինչ 'ի կատարած կենաց ի-
մոց եղիցի ինձ ծառայել նմա
հանապազ . և խոստացեալ
բարեաց նորա՝ կենացն յա-
ւիտենից արժանացայց հա-
սանել . և թերին ծառայ-
ութեան իմոյ , զոր ապիրա

ուխտեամբ ցայսչափ ժամանակ թողի յերկրի, լցից ընդ ամենայն սուրբս նորա յերկինս։ Ամէն։

# ՎԱԽՃԱՆ։

Ոտանաւոր բանք արարեալ ՚ի պարոն Նահապետէ Ջոհրամեան՝ ՚ի գովեստ գրոյս:

Ի ձէնջ հայցեմ եղբարք,
դուք ինձ լուարուք.
զբանըս կենաց խօսիմ՝, ուն
կնդի՛ր լերուք:
եթէ կամիք անսալ դուք
բանից իմոց.
գիրս այս եղիցի լոյս հոգ-
ւոց ձերոց:
Նման է գիրս այս յորդա-
նան գետոյ.
զի է մաքրիչ աղտից՝ լուա
ցիչ հոգւոյ:
լուսաւորէ զմիտս և զհո-
գիս մարդկան.
որք փրկութեան իւրեանց
փա-

փափաքեալ ցանկան։
Ուխտ է սա ունելոյ շնորհս
եօթնարփեան.
որով բացեալ լինի դուռն
արքայութեան.
փակէ և խորտակէ զդրու-
նըս դժոխոց.
ուր վառի հուրն անշէջ,
չարչարիչ հոգւոց։
Հերքիչ է սա դիւաց, որք
յերկնից անկան.
և կորստեան մարդկան
ուժգնակի բաղձան։
կոչէ հրեշտակս յերկնից,
զի առ մեզ գայցեն.
և զօգնութիւնս իւրեանց
մեզ մի՛ խնայիցեն։
Առէք զբարի խրատ յայս-
մանէ գրքոյս.
զի յաւելցի ՚ի ձեզ հաւատ
սէր և յոյս.
աստ կարիցէք ունիլ զօգ-
նու

նութիւն շնորհաց․
և անդ արժանասցեք երկ
նային փառաց։
Պահպանիչ է գիրս այս իւր
ընթերցողաց․
ապաւէն և յոյս իւրոց սի
րողաց։
է առաջնորդ նոցա յերկինս
այն բարեաց․
ուր ոչ գոյ տառապանք, և
ոչ վիշտք չարեաց։
Երանի՛ այնոցիկ որք զայս
ընթեռնուն․
զի փրկին ՚ի չարեաց ան-
թիւ և անհուն։
ժառանգեն զերկինս, ուր
գոյ գանձ անթիւ․
որում միշտ փափաքին՝ որք
սուրբք են սրտիւ։
Տէրունական ազնիւ անդ
խրախճանք կազմին․
և խրախճանակիցքն ընդ
սե-

սեղան թագմին ։
ուր ճաշակեն խորտիկս
զուտ անապական ·
որք ոչ երբեք տեսան ՚ի յա
չաց մարդկան ։
Նոր ձեռացադիր իմ , դիրս
այս պիտանի ·
զոր ետու տպել ծախուքս
ընտանի ։
և զստանաւորս զայս , զոր
շարադրեցի ·
ընդ գրքիս բոլոր՝ ձեզ ըն-
ծայեցի ։
Սիրով ընկալարո՛ւք ըզ գիրս
զայս ցանկալի ·
որ է այգի ծաղկեալ պար-
տէզ պտղալի ։
ուր կարէք ճաշակել զքաղց
րութիւն զայն · զոր ճաշա
կելոց են արդարքն միայն ։